

**«ԻՆՏԵԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԱՂՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵԱՏՄ-ՈՒՄ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Հոդվածների ժողովածու)

**«ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 2020**

ՀՏԴ 339.92:327

ԳՄԴ 65.5+66.4

Ս 247

Գլխավոր խմբագիր՝

տնտեսագիտության դրկտոր, պրոֆեսոր

ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆ

Խմբագիր և կազմող՝

քանասիրական գիտությունների թեկնածու, դրցենտ

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Լուսանկարները՝

ԱՐԹՈՒՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Հայաստանը ԵԱՏՄ-ում: Ինտեգրման տնտեսական

Ս 247 արդյունավետությունը: Հոդվածների ժողովածու.- Եր.:

«ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն, 2020, 56 էջ:

Գրքույկը Եվրասիական փորձագիտական ակումբի անդամների հեղինակած հոդվածների ժողովածու է, որը ներկայացնում է Եվրասիական ինտեգրման գործընթացի արդիական հնչողություն ունեցող տնտեսագիտական խնդիրների, ինչպես նաև նրա քաղաքական-անվտանգային և մշակութային-քաղաքակրթական ասպեկտների ուսումնասիրության արդյունքները:

Հրատարակությունը հասցեագրված է քաղաքական և հասարակական գործիչներին, գիտնականներին և փորձագետներին, լրագրողներին, ասպիրանտներին և ուսանողներին, ինչպես նաև Եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 339.92:327

ԳՄԴ 65.5+66.4

Կազմի ծևավորումը՝ Անդրեյ Աստվածատրյանի

Էջալրումը՝ Սեղա Հովհաննիսյանի

Սրբագրիչ՝ Սեղա Հովհաննիսյան

Տպաքանակը՝ 300օրինակ

ISBN 978-9939-856-72-8

© Արամ Վիլենի Սաֆարյան, 2020

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

«Հնդկացիա և զարգացում»
հետազորության և վերլուծության
հասարակական կազմակերպության
նախագահ, Եվրասիական
փորձագիրական ակումբի
համակարգող



Սիրելի ընթերցողներ,

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Եվրասիական ինտեգրումային նախագծում Հայաստանի մասնակցության ընթացիկ արդյունքներին նվիրված՝ Եվրասիական փորձագիտական ակումբի անդամների հորվածների ժողովածուն: Մեր խնդրանքով հեղինակները՝ Հայաստանի առաջատար գիտնականներ ու փորձագետներ, ներկայացրել են սեփական դիտարկումները և հետխորհրդային տարածքում ինտեգրման հեռանկարների իրենց տեսլականը: Նշենք, որ անցած վեց տարիների ընթացքում մենք պարբերաբար (տարեկան երկու անգամ) անդրադարձել ենք Հայաստանի տնտեսական վիճակին՝ ԵԱՏՄ-ին մեր երկրի անդամակցության համատեքստում: Այս հետազոտությունների եզրահանգումները՝ պահանջված են թե՝ մեր երկրի հասարակական-քաղաքական և փորձագիտական շրջանակներում, թե՝ մեղիստարածքում, որը փորձում է բավարարել վերոնշյալ հարցերին վերաբերող հասարակական պահանջարկը:

Կուզենայի հիշեցնել, որ դեռևս 2013 թ. օգոստոս-հոկտեմբերին մեր նախաձեռնությամբ պրոֆեսոր Աշոտ Թավաղյանի գլխավորած հետազոտական խումբը Եվրասիական զարգացման բանկի մեծ հետազոտական ծրագրի շրջանակներում անցկացրեց «Հայաստանը և Մաքսային միությունը» թեմայով լայնածավալ հետազոտություն: Այն ժամանակ հայ և ռուս փորձագետների համատեղ ջանքերով հիմնավորվեց Հայաստանի Հանրապետության մասնակցության անհրաժեշտությունը թափ հավաքող Եվրասիական տնտեսական ինտեգրմանը: Անցած տարիներն ապացուցեցին մեր կանխատեսումների ճշմարտացիությունը:

Կուզենայի նաև հիշեցնել, որ 2013 թ. հոկտեմբեր-նոյեմբերին մենք կատարեցինք լայնածավալ սոցիոլոգիական հետազոտություն «Հայ հասարակության վերաբերմունքը Եվրասիական և Եվրոպական ինտեգրմանը» թեմայով (հեղինակներ՝ Ս. Մանուկյան, Գ. Հարությունյան, Ա. Սաֆարյան) և ապացուցեցինք, որ Հայաստանի բնակչության մեծամասնությունը կողմէ Ռուսաստանի մասնակցությամբ հետխորհրդային տարածքում լիարժեք տնտեսական ինտեգրացմանը: Կարևոր է, որ չնայած որոշ տոկոսային փոփոխությանը, հայ հասարակությունն այսօր էլ ամուր կանգնած է Ռուսաստանի հետ բազմակողմանի կապերը զարգացնելու և խորացնելու, ինչպես նաև Ռուսաստանի առաջնորդությամբ ինտեգրումային գործընթացներում պոզիտիվ և կառուցողական մասնակցության անհրաժեշտության դիրքերում:

Այս փաստերը հիշեցնում եմ՝ ուրախությամբ նշելու, որ արդի Հայաստանի բոլոր առաջատար քաղաքական ուժերը հասկանում են ԵԱՏՄ-ին մեր երկրի անդամակցության կարևորությունը և ինտեգրացումային գործընթացներում հետազա մասնակցության մեջ հմտորեն փոխադարձ օգուտներ և շահ փնտրելու անհրաժեշտությունը:

Կցանկանայի խորին շնորհակալություն հայտնել հայկական խորհրդարանի ոլորտային մշտական հանձնաժողովին և նրա նախագահ, պրոֆեսոր Միքայել Մելքոնյանին՝ Եվրասիական ինտեգրման տարբեր հարցերի հանդեպ մեր երկրի քաղաքական մոտեցումների գիտափորձագիտական հիմնավորման ուղղությամբ տարվող արգասաքեր և շատ նկատելի համատեղ աշխատանքի համար: Հայկական խորհրդարանի պատգամավորները մեր կոնֆերանսների, սեմինարների և կլոր սեղանների մշտական մասնակիցներն են, ինչը բարձրացնում է մեր փորձագիտական մշակումների արժեքը և նպաստում տվյալ ոլորտում Հայաստանի քաղաքական դասի տեղեկացվածությանը:

Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև ՀՀ կառավարությանը, Եվրասիական ինտեգրացման ուղղությամբ աշխատող բոլոր մասնագետներին՝ մեր տարբեր միջոցառումներին իրենց բարյացակամ վերաբերմունքի ու մասնակցության, ինչպես նաև մեր աշխատանքը բարձր գնահատելու համար: Մենք կարևորում ենք այս դրական տրամադրվածությունը, հասկանալով, որ Հայաստանի քաղաքացիական սեկտորի ակտիվությունը միայն օգուտ կրերի իշխանության կառուցողական նախաձեռնություններին:

Օգտվելով առիթից, շնորհակալություն եմ հայտնում Եվրասիական փորձագիտական ակումբի համահիմնադիր, ԵԱՏՄ ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Լեպեսինին՝ մեր ժողովրդի և նրա ավանդույթների հանդեպ իր հարգանքի ու բարեկամության, մեր կոնֆերանսներին մասնակցելու իր մշտական պատրաստակամության, հատկապես «Եվրասիական ինտեգրացիա».

գաղափարներ, խնդիրներ, գործընթացներ և հեռանկարներ» (Սուկվա-Երևան, 2020) երկրորդ, վերամշակված և լրացված ուսումնական ձեռնարկի հրատարակության համար: Կուզենայի հավատալ, որ Եվրասիական փորձագիտական ակումբի համագործակցությունը ԵԱՏՄինստրուտի, ուսական այլ հասարակական և ակադեմիական կազմակերպությունների, հավասարապես նաև բելառուսական և դաշտական գործընկեր-փորձագետների հետ տեսանելի հեռանկարում նույնքան բեղմնավոր և փոխահավետ կլինի, որքան անցած վեց տարիներին:

Մեր խնդիրն է նպաստել միասնական եվրասիական մշակութաքաղաքակրթական տարածքի և դրա ընդհանուր արժեքների զարգացմանն ու ամրապնդմանը, ինչը կապահովի ԵԱՏՄ-ի արժանի տեղը ժամանակակից արագ փոփոխվող և անհանգիստ աշխարհում: Այս պատճառով է, որ ակումբի անդամ հանդիսացող մեր հարգելի հեղինակները ձեր ուշադրությանն են ներկայացրել իրենց մտորումները բուռն զարգացումներ ապրող եվրասիական ինտեգրման տարածաշրջանային մեգանախազգի տնտեսագիտական, սոցիալական, հումանիտար և գաղափարական ասպեկտների վերաբերյալ: Ողջ աշխարհը հետևում է ԵԱՏՄ-ի զարգացմանը և նրա հաջողություններին՝ աշխատելով հարմարվել այդ գործընթացներին: Համոզված եմ, մեր երկիրը խիստ շահագրգիռ է եվրասիական ինտեգրման հաջողության հարցում և առաջիկայում էլ կառուցողական դերակատարում կունենա:

Ծնորհակալություն այս հրատարակության բոլոր հեղինակներին, մեր ընկերներին և համախոհներին:

Հուսով եմ, որ հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվող այս գրքույկը հետաքրքրություն կառաջացնի ընթերցողների լայն շրջանում:

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼքՈՒՄՅԱՆ



ՀՀ ԱԺ լրարածաշրջանային և
ելքասիական ինվեգրումն
հարցերի մշտական
հանձնաժողովի նախագահ,
դնդեսագիրության դոկտոր,
պրոֆեսոր

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵԱՏՄ-ՈՒՄ. ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ժամանակակից աշխարհը հնարավոր չէ պատկերացնել առանց խորը ինտեգրման: Առանց փոխահավետ կոռպերացված կապերի երկրների կյանքն ու տնտեսությունները չեն կարող արդյունավետ լինել: Բայց ներկայիս պայմաններում ինչ կապեր կամ կոռպերացում էլ լինեն, ինտեգրման ամենաարդյունավետ տեսակը տարածաշրջանային տնտեսական միություններն են:

2015 թ. հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) անդամ է, և 5 տարի անց Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին կարելի է հաստատապես արդյունավետ համարել:

Իհարկե, ոչ բոլոր նպատակներն են իրականացված, սակայն, ընդհանուր առմամբ, մեր երկրի անդամակցությունը ԵԱՏՄ-ին արդարացնորեն հաջողված է զնահատվում:

Ինչպես հայտնի է, տնտեսական միությունն առաջարկում է ապրանքների և ծառայությունների, ֆինանսական կապիտալի ու աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի ապահովում առանց նախային սահմանի: Այս ամենը ճիշտ է: Սակայն մեր երկրի անդամակցության առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ մենք չունենք ընդհանուր սահման ԵԱՏՄ-երկրների հետ: Այս բաղադրիչը ազատ տեղաշարժի լրացուցիչ արգելքներ է ստեղծում, թեպետ վերջերս ԵԱՏՄ-ի անդամ պետությունները վավերացրին բեռնափոխադրումների էլեկտրոնային կապարակների

Աերդրման համաձայնագիրը: Այս տեսակետից Հայաստանի տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունի Վերին Լարսով անցնող միջպետական մայրուղին, որը, ցավոր, հայտնի է բեռնատարների պարբերական կուտակումներով, հատկապես զյուղմքերքների արտահանման ինտենսիֆացման շրջանում՝ ամառվա վերջին ու աշնանը:

Համապատասխան լուծումներ գտնելու համար 2019 թ. հոկտեմբերին ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի պատվիրակությունը մեկնեց Վերին Լարս և Վաղիկավկազում հանդիպեց ՌԴ Պետական Դումայի ԱՊՀ-ի, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի գործերով հանձնաժողովի պատվիրակության և ՌԴ մաքսային ու սահմանապահ ծառայությունների ներկայացուցիչների հետ: Եզրակացությունը անհրաժեշտություն են Վերին Լարսի տեխնիկական վերակառուցումը և բողունակության ընդլայնումը:

Ես, որպես ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ, քարձը եմ գնահատում այս ժողովածուի հրատարակումը, քանի որ այստեղ ներկայացված են մեր հայտնի գործընկերների՝ եվրասիական ինտեգրումային տարածքի մասնագետների հոդվածները: Անշուշտ, մենք պետք է համալիր ձևով գնահատենք և պատկերացնենք ինտեգրումային գործընթացի բոլոր պլյուսներն ու մինուսները:

ԵԱՏՄ անդամ երկրների պատգամավորների արդյունավետ համագործակցությունը և մեկ լավ գործիք է այդ գործընթացին աջակցելու համար:

Կցանկանայի հասուն շեշտել, որ խորհրդարանական երկու հանձնաժողովների (ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Պետական Դումայի) միջև 2019 թ. սեպտեմբերի 17-ին ստորագրվել է համապատասխան հուշագիր:

Քարձը գնահատելով ժողովածուի մեջ ներկայացված վերլուծական հոդվածները, այնուամենայնիվ, կուզենայի նշել, որ ԵԱՏՄ-ի միասնական շուկաների ձևավորման տեմպերը ցածր են:

Հայաստանի Հանրապետության համար շատ կարևոր է միասնական էներգետիկ շուկայի ստեղծումը: Այս գործոնը հատկապես կարևոր է մեր երկրի համար, հաշվի առնելով, որ զագի գրեթե ողջ ծավալը գալիս է Ռուսաստանից, սակայն դրա 1000 մ³-ի գինը սահմանին լրացուցիչ դժվարություններ է ստեղծում մեր կողմից մրցունակ ապրանքներ արտադրելու գործում: Բնականաբար, զագի գինը ազդում է նաև էլեկտրաէներգիայի սակագների վրա: Ինչևէ, եթե ստեղծվի միասնական էներգետիկ շուկա, էներգակիրների գնագոյացման իիմնական խնդիրները լուծված կլինեն:

Ցավոր սրտի, մենք այսօր չենք կարող շրջանցել ԿՈՎԻԴ-19 համավարակը, որի հետևանքներն անհրաժեշտ է երեք ամիսը մեկ վերագնահատել սոցիալ-տնտեսական ռեցեսիայի տեսակետից:

Սոցիալական հարցերի, բիզնեսի աջակցման խնդիրների լուծման և քնակչության առողջության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է հավասարակշիռ մոտեցում:

Այս, ծանր ժամանակներ ենք ապրում...

Այս պայմաններում անհրաժեշտ են ոչ ստանդարտ որոշումներ, հարկային արձակուրդներ, արձակուրդներ բանկային վարկերի ոլորտում, էժան ու երկար փողի ներդրում տնտեսության մեջ և այլն:

ԵԱՏՄ-ի շրջանակներում չլուծված խնդիրների թվում կարելի է նաև նշել Միության անդամ երկրների ռեզիլիենտների մասնակցության հնարավորության ապահովումը պետական տեսներներում ու գնումներում: Սա դեռևս հնարավոր չէ ԵԱՏՄ-ի շրջանակներում էլեկտրոնային ստորագրությունների ընդունելիության հարցի լուծված չլինելու պատճառով:

Հաջորդ խնդիրը Միության այլ անդամ երկրներում բանկային վարկեր ստանալու անհնարինությունն է, քանի որ չեն լուծված գրավի և այլ հարցերը:

Բացի այդ, արդեն վաղուց ենք խոսում, քայլ չենք լուծում եվրասիական տարածքում ոռումինգի վերացման հարցը:

Ընդհանրապես, լայնածավալ թվայնացման և էլեկտրոնային կառավարման հարցը դանդաղ տեմպերով է լուծվում:

Ինչպես հայտնի է, 2019 թ. ԵԱՏՄ-ում նախագահում էր Հայաստանի Հանրապետությունը: Կնքվել և հետագայում վավերացվել են ազատ առևտրի համաձայնագրեր Իրանի և Մինագապուրի հետ:

Այս կապակցությամբ Հայաստանի Հանրապետության համար շատ կարևոր է Հայաստանի և Իրանի սահմանին ազատ առևտրի գոտու գործարկումը: Այս հարցը երկու անգամ քննարկվել է ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովում ՀՀ փոխվարչապետի և Էկոնոմիկայի նախարարի մասնակցությամբ: Հուսով ենք, որ մինչև 2020 թ. վերջը այս խնդիրը լուծված կլինի:

Հետաքրքիր է այն փաստը, որ Հայաստանից դեպի ԵԱՏՄ, մասնավորապես Ռուսաստան արտահանման կառուցվածքում գերակշռում է պատրաստի արտադրանքը, իսկ դեպի Եվրոպական Միության երկրներ՝ լեռնահանքայինը: Դա նշանակում է, որ տեսանելի ապագայում այս միտումը կշարունակի գերիշխել հօգուտ ԵԱՏՄ-ի գծով տեխնոլոգիական արտադրանքի: Սակայն հույս ունենք, որ ԵԱՏՄ-ի երկրներից էլ Հայաստանում ներդրումներ կարվեն:

Համոզված եմ, որ մոտ ժամանակում նշված և այլ խնդիրները հիմնականում կլուծվեն: Դրա համար պետք են քաղաքական կամք և համատեղ ջանքեր:

Եվս մեկ անգամ ողջունում եմ այս ժողովածուի հրատարակումը և դրա նախաձեռնողներին ու հեղինակներին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՊԵԽԻՆ

ԵԱՏՄ ինսպիրուվի տնօրեն,
փիլիսոփայական գիրությունների
թեկնածու, Եվրասիական
փորձագիրական ակումբի
համահիմնադիր



ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

Եվրասիական Տնտեսական Սիությունը (ԵԱՏՄ) մի շարք հետխորհրդային երկրների վերահնտեղման ոչ միակ, բայց հիմնական ձևաչափն է այդ երկրների դիմամիկ և նրգունակ սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու համար: Այս Սիության ձևավորման սկիզբը դրվել է դեռևս 1994 թ., սակայն այսօր՝ ավելի քան քառորդ դար անց, այդ միավորումն իրողություն է, որը հենվում է Արկտիկայից մինչև Կովկասյան լեռներ և Բարիկայից մինչև Խաղաղ օվկիանոս ծզվող հսկայական տարածքի ժողովուրդների և պետությունների դարավոր առևտրատնտեսական կապերի վրա: ԵԱՏՄ-ն զարգանում է մեր տարածաշրջանում ապրող ավելի քան 100 բնիկ ժողովուրդների ընդհանուր եվրասիական մշակույթի հզոր հիմքի վրա, որում հատուկ տեղ են գրավում հայ և ռուս ժողովուրդները:

Ինչպես հայտնի է, Հյուսիսային Եվրասիայի մի շարք նորանկախ պետությունների տնտեսական ինտեղման հիմնական նախադրյալները ոչ միայն առանձին քաղաքական գործիչների զարաֆարներն են կամ ազգային վերնախավերի շահերը, այլ այնպիսի օրյեկտիվ հիմքերը, ինչպիսիք են ընդհանուր պատմական ուղին և տվյալ տարածքում ապրող երեսների քաղաքակրթական միասնությունը: Այդ մասին ուղիղ 100 տարի առաջ գրել է ռուս ականավոր գիտնական Նիկոլայ Տրուեցկոյը իր «Եվրոպան և մարդկությունը» գրքում: Նշանակած աշխատության հրատարակումը 1920 թ. ընդունված է համարել «Եվրասիականություն» կոչված աշխարհայացքային շարժման մեկնարկ: Այդուհանդերձ, 21-րդ դարում եվրասիական պետությունների վերահնտեղման գործընթացը հարթ չէ, այլ, իրականում, քավական

բարդ: Այն տեղի է ունենում Եվրամիության, ԱՄՆ-ի, Չինաստանի և այլ համաշխարհային «ուժային կենտրոնների» կողմից հետխորհրդային տարածքում տարբեր գլոբալ և տրանսռեգիոնալ ծրագրերի ինտենսիվ իրականացման համատեքստում: Դա տեղի է ունենում մի իրավիճակում, երբ Չինաստանը և խլամական ուննան ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում Կենտրոնական Ասիայի երկրներում, երբ ռազմական բախումները Հարավային Կովկասի սահմաններին էլ ավելի են սաստկանում, իսկ Ռուսաստանի Դաշնությունը ստիպված է զարգացնել իր տնտեսությունը Արևմուտքի կողմից փարարված տնտեսական պատժամիջոցների պայմաններում: Այդուհանդեռձ, հետխորհրդային երկրները չունեն այլ ուղի, քան շարունակել զարգացնել իրենց բազմադարյա «Եվրասիական քաղաքակրթությունը» իրենց սեփական, ինքնիշխան տնտեսական և սոցիալ-մշակութային հիմքերի վրա: Հակառակ դեպքում տարածաշրջանի պետություններին սպասում են ազգային ինքնիշխանության կորուստ և հարևան տերությունների ու քաղաքակրթությունների հետամնաց ծայրամասի կարգավիճակ:

Արդի պայմաններում Եվրասիական ինտեգրումային նախագծերին մասնակցող երկրների գերազուն արժեքն է դառնում իրական ազգային ինքնիշխանությունը: Ահա թե ինչու յուրաքանչյուր հետխորհրդային պետություն այսօր կայուն և դիմամիկ տնտեսական զարգացման, սահմանամերձ համագործակցության ամրապնդման և արտաքին քաղաքականության ոլորտում հարևան երկրների հետ համաձայնեցված գործողությունների իրականացման, Եվրասիական մայրցամաքում հավաքական անվտանգության և մշակույթների ակտիվ երկխոսության կարիք ունի: Պետք է գիտակցել, որ առանց Եվրասիական ժողովուրդների համակողմանի կապերի զարգացման և սոցիալ-մշակութային ընդհանորության ու փոխադարձ հարգանքի ամրապնդման նորանկախ պետությունների տնտեսական ինտեգրացումը չի հաջողի:

Ընդհանուր Եվրասիական մշակույթը մոտ արժեքներն են, նման ավանդույթները, ընդհանուր մեծ պատմությունը, փոխադարձ շահերը: Մենք բոլորս, մեր հայրերն ու պապերը երկար ժամանակ նույն երկրի քաղաքացի ենք եղել, միասին ենք պաշտպանել մեր ընդհանուր ինքնիշխանությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, միասին ենք դիմակայում միջազգային ահարեւկությանը և նեռնացիզմին: Այդ պատճառով էլ մեր երկրների ինտեգրումային ներուժն ահուելի է: Պետք է միայն քոնել ժամանակի ալիքը՝ չմեկուսանալ ամենամոտ հարևաններից (ինչը բնական էր ԽՍՀՄ-ի փլուզման առաջին տարիներին), այլ հակառակ՝ կենտրոնանալ հարևան պետությունների հետ բեղմնավոր հարաբերություններ ունենալու, մեզ դարերով միավորած և ապագայում էլ միավորող գաղափարների որոնման ու ամրապնդման վրա:

Հետխորհրդային տարածքի ինտեգրումային ծրագրերում ուրույն տեղ

Է գրավում Ուսաստանի և Հայաստանի համագործակցությունը: Այս երկու քրիստոնեական երկրները մարմնավորում են երկու եզակի՝ հինավոր հայ և բազմազգ ուսաստանյան Եվրասիական ժողովուրդների իրական քաղաքակրթական միասնությունը և մշակութային ընդհանրությունը:

Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական առումով ՀՀ-ն և ՌԴ-ն միմյանց փոխլրացնող երկրներ են. Ուսաստանը Հարավային Կովկասում խաղաղության և Հայաստանի շահերի երաշխավորն է իր հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդների հետ հարաբերություններում: Իր հերթին Հայաստանը Հյուսիսային Եվրասիայի և ողջ քրիստոնեական աշխարհի առաջամարտիկն է իսլամական աշխարհի սահմանին:

Վերջին տարիներին այս երկու երկրների տնտեսական համագործակցությունը չափազանց մեծ նշանակություն է ձեռք բերել: Ուսաստանը հայկական ապրանքների գլխավոր շուկան է և միաժամանակ էներգակիրների ու այլ արտադրանքի հիմնական մատակարարը և մեծ դեր ունի որպես բարեկամ երկրի դինամիկ տնտեսական զարգացման երաշխավոր: Հայաստանն, իր հերթին, ՌԴ կարևորագույն գործընկերն ու դաշնակիցն է Ուսաստանի մասնակցությամբ ստեղծված բոլոր ինտեգրումային կառույցներում և ՀԱՊԿ-ում, պաշտպանելով ԵԱՏՄ-ի և այլ հետխորհրդային միավորումների հարավային սահմանները:

Ե'վ Հայաստանը, և՛ Ուսաստանը վերջին տարիներին իրենց կաշվի վրա են զգացել ամենատարբեր տարածաշրջանային ու գլոբալ ուժերի բազմաթիվ գրոհները, ներառյալ տարրեր տարածաշրջանային բախումների մեջ իրենց ներքաշելու ճիգերը և ներքաղաքական իրավիճակի ապակայունացման փորձերը: Այսպես, Հայաստանի և Աղբեջանի սահմանին հերթական բախում հրահրելու յուրաքանչյուր փորձ, անշուշտ, նպատակ ունի խարարելու և կասկածի տակ դնելու հայ-ուսական դաշնակցային հարաբերությունները:

Այս փորձերն ի սկզբանե դատապարտված են տապալման, քանի որ ՀՀ և ՌԴ համագործակցությունը և դաշնակցային հարաբերությունները բացարձակ օրգանական են: Ուսաստանը և Հայաստանը պետք են իրար մշակութային, ուսումնական, տնտեսական և բոլոր այլ առումներով: Ահա թե ինչու, չնայած ԵԱՏՄ-ի վրա տարրեր գլոբալ կառույցների հզոր ճնշմանը, ինչպես նաև այդ Միությունը վարկարեկելու ձգտմանը, այս ինտեգրումային ծրագիրը ապրում և զարգանում է, իսկ Հայաստանի և Ուսաստանի համագործակցությունը այս Միությունում Եվրասիական ինտեգրացման՝ որպես այդպիսին հաջողության հասնելու կարևորագույն պայմանն է:

Հայ և ոուս տնտեսագետները վաղուց ապացուցել են, որ ՀՀ և ՌԴ տնտեսական համագործակցությունը ոչ միայն փոխշահավետ է: Հայաստանի մասնակցությունը ԵԱՏՄ-ին և մեր երկրների միջև կնքված ուղիղ համաձայնագրերը կարևորագույն պայման են ՀՀ դինամիկ տնտեսական

զարգացման համար: Իր հերթին Հայաստանը ոռուսական արտադրանքի կարևորագույն հուսալի արտաքին սպառողներից մեկն է արտաքին շուկա-ներում ՌԴ-ի կոչտ շրջափակման իրավիճակում:

2020 թ. առանձնահատուկ տարի կդառնա հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ: Երկու ժողովուրդների ճիշտ պատմական ընտրությունը հերթական փորձության ենթարկելու և հաստատման տարի: Ոչ մի կասկած չունեմ, որ նշված հարաբերությունները ժամանակի ընթացքում ոչ միայն կպահպանվեն, այլև ավելի հուսալի և արգասարեր կդառնան:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Տնտեսագիրության դոկտոր,
պրոֆեսոր, «Այլռազմանք»
հետազոտական կենտրոնի ղեկավար,
Եվրասիական փորձագիրական
ակումբի անդամ



ԵԱԾՍ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2015-2020 Թ-Թ.) ԵՎ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՌԱԿԱՐՆԵՐԸ

ԵԱԾՍ-ին անդամակցության տարիների ընթացքում Հայաստանը կարողացավ ոչ միայն մեծացնել իր տնտեսական ներուժը, բարելավել միշտը մակրոտնտեսական ցուցանիշներ, այլև բարձրացնել ազգային տնտեսության մրցունակությունը որոշ ապրանքների ու ծառայությունների մասով, ինչպես նաև հասնել իրավես որակյալ աճի: Հայաստանը կարողացավ ավելի շահավետ պայմաններով վերականգնել համագործակցությունը հետխորհրդային տարածքի նախկին գործընկեր-երկրների հետ և էներգակիրներ ու հոմք ճեղք բերել արտոնյալ սակագներով՝ գտնելով իր կայուն տեղը տարածաշրջանային ինտեգրման համատեքստում:

Այս ամենը ոչ միայն դրական ազդեցություն քողեց երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, այլև զգալիորեն ամրապնդեց Հայաստանի տնտեսական անկախությունը, տնտեսական անվտանգությունը և իրական հնարավորություններ ստեղծեց ԵԱԾՍ-ի հետ համագործակցության առավելությունները բացահայտելու և իրականացնելու համար:

Ուղղության մեջ անդամակցության առաջնային դրական ազդեցությունների ներուժը պատկերացնելու համար, բերևս, նպատակահարմար է ծանոթանալ, մասնավորապես, ԵԱԾՍ-ին Հայաստանի անդամակցության հետ կապված ընթացիկ իրողություններին, որոնք ներկայացված են համագործակցության առավելությունները բնորոշող ցուցանիշներով ու փաստերով:


Եվրասիական համձնաժողովի պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստանն արձանագրել է ամենամեծ տնտեսական օգուտը ԵԱՏՄ-ի բոլոր անդամ երկրների միջև:

Հայաստանի տնտեսության զարգացումը նախքան ԵԱՏՄ մտնելը և մտնելուց հետո բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. 2012 թ. տնտեսական ակտիվության աճը կազմել է 7.2 տոկոս, 2013՝ 3.5%, 2014՝ 4.1%, 2015՝ 3%, 2016՝ 0.7%, 2017՝ 7.7%, 2018՝ 5.8%, իսկ 2019՝ 7.8 տոկոս:

Նկար 1. Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշները 2012-2019 թթ.

Տնտեսության ակտիվության ցուցանիշները

■ 2012թ. ■ 2013թ. ■ 2014թ. ■ 2015թ. ■ 2016թ. ■ 2017թ. ■ 2018թ. ■ 2019թ.



Այս ամենը, մեր համոզմամբ, ոչ միայն ներտնտեսական դրական միտումների, այլ նաև արտաքին գործոնների արդյունք է, որոնց թվում պետք է հատուկ նշել Հայաստանի անդամակցությունը և նախագահությունը ԵԱՏՄ-ում: Առաջինը ԵԱՏՄ թվայնացման հարցը առաջադրելու Հայաստանի նախաձեռնությունն էր, որը լիովին համահունչ է ԵԱՏՄ նախագահող երկրի առաջնահերթություններին, և դրա հնարավորին լիարժեք իրականացմանը¹, քանի որ կոչված է դառնալու բյուրոկրատական արգելվների և կոնտրաֆակտի դեմ պայքարի գլխավոր գործիք: Այս ոլորտում Հայաստանը որոշակի դրական փորձ ունի. ակտիվորեն զարգանում է թվային բանկինգը, որոշ խոշոր վարկային կազմակերպություններ ներդրել են ավտոմատացված սքրինինգային (թվային վիճակագրական մեթոդների վրա հենված) վարկավորման համակարգ ֆիզիկական անձանց ու փոքր բիզնեսի համար:

Հայաստանի համար մեկ այլ կարևոր իրադարձություն էր ԵԱՏՄ-ին անդամակցության շրջանակում 2019 թ. դեկտեմբերին Սանկտ-Պետերբուրգի

¹ ԵԱՏՄ-ի թվային օրակարգը, <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/workgroup/materials/Pages/docs.aspx>

ԵԱՏՄ ոչ ֆորմալ գագարնաժողովի ընթացքում «Քոշակային» համաձայնագրի ստորագրությունը: Միասնական քոշակի շուկան ենթադրում է, որ ԵԱՏՄ-ի անդամ պետությունների քաղաքացիների քոշակը նշանակելու ժամանակ նրանց աշխատանքային ստաժը հաշվի կառնվի:

Կարևոր է, որ տարածաշրջանային ինտեգրացումը շահավետ լինի հասարակ քաղաքացիների համար: Հանձնաժողովի ու Միության անդամ պետությունների հակամենաշնորհային մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում ՀՀ քջային կապի օպերատոր «Արմենթել» ՓԲԸ-ն 6 անգամ իջեցրեց ոռումինզի (ձայնային կապ) սակագները, հասցնելով բողեքն 40 ոռուլուց մինչև 7 ոռուլու: Ըստ հանուր առնամբ Հայաստանի համար սահմանվել է միջինը ավելի քան 50% իջեցում:²

Աղյուսակ 1. Քջային կապի օպերատորներ

ՀՀ քջային օպերատորներ						
Օրանժ	ԵԱՏՄ անդամ	66%	47%	-	47%	
Վիվա Սել	պետություններից կատարված զանգերի սակագները	40%	76%	21%	70%	
Բիլայն		60%	60%	60%	60%	

Էական իրադարձություն դարձավ նաև Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառության ռեկորդը, որը 2019 թ. արդյունքով հասավ 2 միլիարդ դրամի: Ռուսաստանը շարունակում է առաջնորդել ՀՀ առևտուրային գործընկերների ցուցակը: Այս ցուցանիշի նվազումը մեծապես պայմանավորված է ԵԱՏՄ-ին անդամակցությամբ, Ռուսաստանում և նրա միջոցով, այլ երկրների հետ առանց տուրքերի առևտուր անելու հնարավորությամբ: Անկասկած, ամեն հնարավորություն կա գերազանցելու այս ցուցանիշը, հետազոյում աճեցնելով արտահանումը դեպի ԵԱՏՄ-ի երկրներ, հատկապես, եթե հուսալիորեն լուծենիր երկրի կոմունիկացիոն մեկուսացման խնդիրը: Ավելին, ԵԱՏՄ-ի օգնությամբ Հայաստանը հույս ունի կրկին արդյունաբերական երկիր դառնալու:³

Հատկանշական է, որ անդամակցության երկրորդ տարում, հաղթահրելով գործնականում նախորդ տարվա գրոյական աճը, 2017 թ. Հայաստանն

² ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի տեղեկություններով:

³ ԵԱՏՄ-ի օգնությամբ Հայաստանը հույս ունի կրկին արդյունաբերական երկիր դառնալու: Մանրամասները տես. <https://edaily.com/ru/news/2019/12/22/s-pomoshchyu-eaes-armeniya-vnov-rasschityvaet-stat-industrialnoy-stranoy>

ավելացրեց արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ 40.3 տոկոսով, հասցնելով այն 579.5 միլիոն դոլարի: Արտահանումը դեպի Ռուսաստան կազմեց 541.5 միլիոն դոլար (մինչև 44.6%), Թուրքմենստան՝ 6 միլիոն դոլար (մինչև 5.7%), Ղազախստան՝ 4.9 միլիոն դոլար (1.2%), Բելառուս՝ 6.9 միլիոն դոլար (անկում՝ 48.3%) և այլ երկրներ՝ 9.6 միլիոն դոլար (աճ՝ 52.2%): Տարվա ընթացքում Հայաստանը, տարբեր ծրագրերի շրջանակներում, ներգրավել է մոտ 856 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումային կապիտալ:

ԵԱՏՄ-ին անդամակցության առանցքային նվաճումներից է ռազմավարական զարգացման հզոր խթաններից մեկը համարվող Մերժի Ազատ տնտեսական գոտու ստեղծումը: Բացի այդ, 2019 թ. հոկտեմբերի 1-ին, Երևանում Բարձրագույն տնտեսական խորհրդի նիստի ժամանակ Սինգապուրի և ԵԱՏՄ-ի միջև ստորագրվեց ազատ առևտրի մասին համաձայնագիր:⁴ Հայաստանի նախագահության շրջանում ուժի մեջ մտավ նաև ԵԱՏՄ-ի շրջանակներում Հայաստանի կողմից նախաձեռնված՝ Իրանի հետ ազատ առևտրի մասին ժամանակավոր համաձայնագիրը:⁵ Բացի այդ, 2019 թ. հոկտեմբերի 25-ին ԵԱՏՄ-ի և Սերբիայի Հանրապետության միջև ստորագրվեց համաձայնագիր ազատ առևտրի գոտու մասին:⁶ ԵԱՏՄ-ին անդամակցության շրջանակներում Հայաստանի համար կարևոր իրադարձություն դարձավ Երևանում կայացած ԵԱՏՄ-ի բարձրագույն տնտեսական խորհրդի և ԵԱՏՄ-ի միջկառավարական խորհրդի նիստը, որում Սոլյուվայի և Իրանի (որպես ԵԱՏՄ-ի հետ ԱԱԳ մեջ մտնող պետության ղեկավար) նախագահների և Սինգապուրի վարչապետի մասնակցությամբ ստորագրվեցին համաձայնագրեր ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման մասին: Նախորդ տարվա համեմատ 2019 թ. միայն բեռնափոխադրումների ծավալը տրամադրութիւնում աճել է 27 տոկոսով: Արդյունաբերական ապրանքների աճի տեմպերը կրկնապատկվել են մինչև 9%: Մշակող արդյունաբերության աճը հասել է 10%-ի: Գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո Հայաստանի տնտեսական աճը հասավ 7.6% համաշխարհային ռեկորդի: 2019 թ. արտահանումը դեպի Ռուսաստան ավելացավ առաջնայիկ տեմպերով՝ 718 միլիոնով, և աճում է 10.2%-ով: Ռուսաստանը հիմնական արտահանող է: Ռուսաստանից ներմուծումը աճել է 16.9%-ով՝ հասնելով 1 631 մլրդ դոլարի: Ընդհանուր առմամբ, համեմատած նախորդ տարվա 688 միլիոն 473,6 հազար դոլարի հետ, Հայաստանից արտահանումը 2019 թ.

⁴ ԵԱՏՄ-ն և Սինգապուրը ստորագրեցին ազատ առևտրի մասին համաձայնագիր, www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/01.10.2019-2.aspx

⁵ Ժամանակավոր համաձայնագիր Իրանի հետ ազատ առևտրի գոտու մասին, <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/>

⁶ Հայաստանը և ԵԱՏՄ-ն, <https://www.ritmeurasia.org/news--2020-01-11--armenija-i-eaes-5-glavnyh-sobytiy-2019-goda-46902>

ավելացել է 9.3%-ով, իսկ ներմուծումը՝ 10.9%-ով: Միևնույն ժամանակ արտահանումը դեպի ԵԱՏՄ-ի երկրներ կազմել է 760 միլիոն 894,5 հազար դոլար, աճելով 10.5%-ով: Զրուաշրջիկների թիվը զգալիորեն ավելացել է՝ քայլ առ քայլ մոտենալով 2 միլիոն խորհրդանշական սահմանագծին: 2019 թ. Հայաստանն ընդունեց 1 894 377 զրուաշրջիկ, ինչը 14.7%-ով ավելի է, քան նախորդ տարում: Օտարերկրյա զրուաշրջիկներից ամենամեծ թիվը կազմում են Ռուսաստանի զրուաշրջիկները: Ռուսաստանը շարունակում է մնալ հայկական պատրաստի արտադրանքի իրացման հիմնական շուկան: Հայաստան եկող բոլոր ուղիղ տրանսֆերտների 63–65%-ը գալիս է Ռուսաստանից: Եներգակիրների ճնշող մեծամասնությունը գալիս է Ռուսաստանից (90% գազ, 100 տ. միջուկային վառելիք): Հայաստանի տնտեսության մեջ ուղիղ ներդրումների 51%-ը բաժին է ընկերում ռուսաստանյան ընկերություններին: Լավագույն ցուցանիշներն արձանագրվել են ծառայությունների ոլորտում: Տրանսպորտի մասով նախորդ տարվա համեմատությամբ բեռնափոխադրումների աճը կազմել է 25%: Ինչ վերաբերում է արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերին՝ այն կրկնապատկվել է, կազմելով 9%, մասնավորապես, թերուտի հանքավայրում լեռնահանքային աշխատանքների վերսկսման հաշվին: Կարևոր է նկատել, որ մշակող արդյունաբերությունը աճել է 7.6% կետով (տվյալ ցուցանիշը կազմել է 10%): Ծինարարությունն աճել է 4.5%-ով, ինչն արտահայտում է տնտեսության աշխատացման միտումը: Միակ ոլորտը, որում տեղի է ունեցել 4% անկում, գյուղատնտեսական արտադրանքն է:⁷

Արտահանման (9.4%) համեմատ ներմուծման առաջանցիկ աճի (10.8%) արդյունքում բացասական սալլոն աճել է ավելի քան 300 մլն դոլարով: Բացի այդ, արտահանման կառուցվածքը բավարար չափով չի դիվերսիֆիկացված: առյուծի բաժին են կազմում հանքանյութը՝ 28%, քարերը և մետաղները՝ 26%, և սննդամթերքը՝ 24%: Չարունակում են նաև աճել օտարերկրյա մասնավոր տրանսֆերտները, ինչը կապված է զգրանցված ռեէքսպորտի հետ: Ինչ վերաբերում է Հայաստանից ԵԱՏՄ արտահանմանը՝ այն աճում է արագացված տեմպերով: Հայաստանից ԵԱՏՄ-ի երկրներ արտահանումը աճել է 11%-ով, իսկ ընդհանուր ցուցանիշը՝ 4.6 11%-ով: Արտահանումը դեպի ԵԱՏՄ-ի երկրներ տարբերվում է իր կազմով՝ հումքը այստեղ շատ ավելի քիչ է, քան պատրաստի արտադրանքը՝ կոնյակ և գինիներ, բանջարամբային պահածոներ, հագուստ, ավելի պակաս ծավալով՝ ոսկերչական ապրանքներ: Մոտ ապագայում ապրանքների փոխադրումը ԵԱՏՄ-ի երկրներ ավելի դյուրին կդառնա: Երևանում, ԵԱՏՄ-ի զագաթնաժողովում որոշում ընդունվեց

⁷ Հայաստանի Հանքավետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին, <https://armstat.am/file/doc/99517638.pdf>

կրծատել ստուգումները ապրանքների տեղաշարժման ընթացքում, ինչը կրաքարացնի տեղաշարժման արագությունը և կնվազեցնի փոխադրման հետ կապված ծախսերը: Հիշեցնենք, որ 2018 թ. Հայաստանից դեպի Ռուսաստան արտահանումը կազմել էր մոտ 654 մլն դոլար, Ղրղզստան՝ մոտ 1 միլիոն: 2015 թ. համեմատ (ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության առաջին տարին) դեպի Ռուսաստան արտահանումը աճել է 400 միլիոնից ավելի դոլարով, դեպի Բելառուս՝ մոտ 9 միլիոնով, դեպի Ղազախստան՝ մոտ 6 միլիոնով, դեպի Ղրղզստան՝ ավելի քան 600 հազարով:⁸

ԵԱՏՄ-ի տարածաշրջանային ինստեգրման լրացուցիչ նախապատվությունների ու եկամուտների ստացման հաշվին շարունակվում է պետական գանձարանից կապիտալ ծախսերի ավելացմանն ուղղված՝ պետության տնտեսական քաղաքականությունը, որի շնորհիվ ավելի քան 400 միլիոն դոլարի դեկտեմբերյան պրոֆիցիտը տարեվերջին վերածվեց 71 միլիարդ դրամի դեֆիցիտի: Նվազեց նաև պետական պարտքի վճարման հետ կապված ռիսկը, որի պետական պարտք – ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է մոտ 50%: 2019 թ. ԵԱՏՄ-ի ստեղծման և այդ միավորման մեջ մեր երկրի անդամակցության հինգերորդ տարին էր: Այդ ժամանակը քավարար է նախնական զնահատականներ տալու համար: ԵՏՀ ինստեգրացման և մակրոտնտեսության նախարար Սերգեյ Գլազեր, մասնավորապես, համեմատեց Հայաստանի և Ուկրաինայի վերջին հինգ տարվա տնտեսական ցուցանիշները: Այդ ընթացքում Հայաստանի արդյունաբերական արտադրանքը աճել է 57%-ով, իսկ Ուկրաինայում՝ ընկել 22%-ով: Հայաստանի ներդրումները աճել են 57%-ով, իսկ Ուկրաինայում՝ նվազել մեկ քառորդով: Հայաստանի արտահանումը աճել է 67%-ով, իսկ Ուկրաինայում՝ ընկել մեկ երրորդով:⁹

ԵԱՏՄ-ում Հայաստանի նախազահության տեսակետից կան նաև էական նշանակություն ունեցող այլ նվազումներ: Կան և չլուծված խնդիրներ, որոնց թվում առանցքային է տրանսպորտային խնդիրը, մասնավորապես, Վերին Լարսի միջանցքի գործունեության հարցը: Սակայն գոյություն ունեցող խնդիրները ոչ մի կերպ չեն կարող գերակշռել ԵԱՏՄ-ին Հայաստանի ինստեգրացմանը և մասնակցությանը կողմ փաստարկներին: Այս տարածաշրջանային ինստեգրացումը այլընտրանք չունի: Համագործակցության առավելությունների իրացման տեսակետից շատ կարևոր է, որ Հայաստանն ու Ռուսաստանը միասին աշխատեն ԵԱՏՄ-ի շրջանակներում բոլոր խոչընդոտներն ու սահմանափակումները լիովին վերացնելու համար:

⁸ <https://ru.armeniasputnik.am/economy/20191014/20759386/Ministr-ekonomiki-Armenii-rasskazal-o-roste-eksporta-iz-Armenii-v-EAES.html>

⁹ Գլազեր համեմատել է Հայաստանի, Ղրղզստանի և Ուկրաինայի ինստեգրումային գործնքացների արդյունքները <https://ru.armeniasputnik.am/economy/20191129/21256364/Glazev>

ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆ

Տնտեսագիրության դռևկոր,
պրոֆեսոր, Տնտեսագիրական
հետազոտությունների կենտրոնի
ղեկավար, Եվրասիական
փորձագիրական ակումբի անդամ՝



ԵԱԾՍ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՈՒԺԲԸ

Հայաստանի տնտեսության զարգացման սցենարը առանցքային խնդիր է: Առաջին՝ նախընտրելի սցենարը ենթադրում է արտահանման հետ կապված խնդիրների լուծում՝ գումարած տեղական արտադրանքի զարգացում, գումարած գործազրկության նվազում, գումարած սոցիալական ոլորտի վիճակի բարելավում: Երկրորդ տարրերակը կարող է նպաստել միայն ներքին շուկայի սահմանափակ թվով ճյուղերի զարգացմանը, ինչպիսիք են շինարարությունը, անշարժ գույքի շուկան, մանրածախ առևտուրը՝ հիմնականում վարկերի, դրամաշնորհների ու տրանսֆերտների հաշվին:

Առաջին սցենարով Հայաստանի տնտեսության զարգացման անհրաժեշտությունը ընդունվում է բոլոր առաջատար քաղաքական ուժերի կողմից: Հայաստանի անդամակցությունը ԵԱԾՍ-ին համապատասխանում է հենց այդ սցենարին: Գործնականում Հայաստանի բոլոր առաջատար կուսակցությունները համարում են, որ ԵԱԾՍ անդամակցությունը նպատակահարմար է: Կյանքն ապացուցեց Հայաստանի կողմից ինտեգրումային գործընթացներին մասնակցության վերաբերյալ մեր եզրահանգումների ճշմարտությունը:

Ինտեգրման ընթացքում չափազանց կարևոր է ունենալ դրա կանոններին ազդելու հնարավորություն, ընդունված որոշումների կատարման վերահսկողության լծակներ: Այդ հնարավորությունը Հայաստանը ձեռք բերեց ԵԱԾՍ-ում, ինչն էական է իր տնտեսական զարգացման համար: Փոքր

տնտեսություն ունեցող երկրների համար հատկապես կարևոր է պատրաստի արտադրանքի արտահանման էական աճը: Նշենք, որ Հայաստանի ՀՆԱ-ն 2019 թ. աճեց 7,6 տոկոսով:

Ներդրումների ծավալով Ռուսաստանն առաջին տեղն է գրավում ԵԱՏՄ-ի երկրների շարբում: Վերջին երեք տարիների ընթացքում Ռուսաստանի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ կազմել են ուղղակի ներդրումների 51%-ը: ԵԱՏՄ երկրներում ԵԱՏՄ-ի տնտեսությունների կոռպերացման համար, որը ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի առանցքային նպատակն է, չափազանց կարևոր են փոխադարձ ներդրումները: Արժե նշել, որ ԵԱՏՄ-ին չանդամակցելու դեպքում կարող էին առաջանալ հետևյալ խնդիրները.

Աղյուսակ 1. ԵԱՏՄ-ին չանդամակցելու հետ կապված խնդիրները

Ուազմավարական նշանակության ապրանքների գների բարձրացումը բացասաբար կանդրադառնար մեր երկրի տնտեսական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման վրա (այդ տեսակի արտադրանք ԵՄ-ից չի ստացվում):

Չին հանվի տուրքերը և ոչ սակագնային սահմանափակումները դեպի ԵԱՏՄ արտադրանքի արտահանման համար:

Բարձր հավանականությամբ աշխատանքային միգրանտների տրանսֆերտների ծավալը էապես կրնկներ: ԵՄ-ի հետ կնքված Համբուղանուր և ընդլայնված գործընկերության համաձայնագրը չի նախատեսում ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժ ԵՄ երկրներ:

Հայաստանի տնտեսության առաջ կանգնած կարևորագույն խնդիրներից մեկը՝ տնտեսության առևտրային հաշվեկշռի լուրջ խախտումն ու կառուցվածքային դիսրալանսն է: Գործազրկության և դրանով պայմանավորված միգրացիայի խնդիրը շատ սուր է կանգնած: ԵԱՏՄ-ն այդ խնդիրները լուծելու իրական հնարավորություն է տալիս:

Ուազմավարական նշանակության արտադրանքի գների առումով Հայաստանին առավել լայն հնարավորություններ է տալիս նախնառաջ ԵԱՏՄ-ի առաջնորդ Ռուսաստանի Դաշնությունը: Հարք է նշել, որ ԵԱՏՄ-ն լրացուցիչ հնարավորություններ է ստեղծել նաև արտոնյալ վարկեր ստանալու առումով: Ընդ որում՝ առաջին հերթին ՀՀ պաշտպանունակության ամրապնդման համար: Ի տարբերություն միջազգային կազմակերպությունների մի շարք վարկերի, Ռուսաստանից ստացվում են խիստ նպատակային վարկեր: 300 միլիոն դոլարի չափով երկու նպատակային վարկերը ուղղված են մեր երկրի պաշտպանունակության ամրապնդմանը: Տվյալ վարկերի արդյունավետությունն անվիճելի է: Միջոցառումների երկու ասպեկտները՝

մաքսատուրքերի չեղարկումը և ներմուծված հումքի գների իջեցումը, անկա-
կած, նպաստում են արտահանման աճին և գործազրկության նվազմանը:

Հայաստանի գրոսաշրջության հնարավորությունները մեծապես պայ-
մանավորված են ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ (ԵԱՏՄ-ի
անդամ երկրների քաղաքացիների ազատ տեղաշարժի համատեքստում),
ինչպես նաև Ռուսաստանի քաղաքացիների համար ներքին անձնագրերով
Հայաստան այցելելու հնարավորությամբ: Հայաստանի տրանսֆերտները
հիմնականում ստացվում են Ռուսաստանից: Աշխատանքային միզրացիայի
ավանդական ուղղությունը Ռուսաստանն է: ՀՀ արտաքին տնտեսական
կապերի ներկայիս վիճակը և ուղղությունը ցույց են տալիս տնտեսության
հետագա զարգացման իրական վեկտորը:

Աղյուսակ 2. ՀՀ տնտեսության զարգացման ուղղությունը բնութագրող գործոններ

<p>Պատրաստի արտադրանքի գերիշխող մասը արտահանվում է Ռուսաստան:</p>
<p>Հայաստանի տրանսֆերտների 63 տոկոսը գալիս է Ռուսաստանից:</p>
<p>Հայաստանի էներգառեսուրսների զգալի մասը գալիս է ՌԴ-ը (գազ՝ մոտ 90%, միջուկային վառելիք՝ 100 %):</p>
<p>Օտարերկրյա ուղիղ ներդրումների 51%-ը բաժին է ընկնում ռուսական ընկերություններին:</p>

Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին սկզբունքային հնարավո-
րություններ է ապահովում հանրապետության տնտեսության հետագա
զարգացման և կառուցվածքի վերանայման համար: Եվրասիական ինտեգ-
րումային կառույցներին միանալը էականորեն խթանում է փոխահավետ
տնտեսական համագործակցությունը:

Իհարկե, չափազանց կարևոր նշանակություն ունի նաև ապրանքների,
ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների լիարժեք
ձևավորումը Միության շրջանակներում: Ազատության բոլոր չորս պարա-
մետրերը՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային
ռեսուրսների տեղաշարժը, պետք է գործեն առանց բացառումների:

ԵԱՏՄ-ի ներուժի բարձրացման համար բավականին արդիական է
մշակել առաջին հերթին ԵԱՏՄ-ի ռազմավարական օրյեկտների կոռպե-
րացման և արդիականացման ճանապարհային քարտեզը, հաշվի առնելով
ՌԴ արդյունաբերական քաղաքականության մասին օրենքը և ԵԱՏՄ-ի
պայմանագրի չորրորդ հոդվածը:

Հարկ է նշել Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի կարևոր

որոշումը ԵԱՏՄ-ի արդյունաբերական քաղաքականության խորհրդի ստեղծման մասին, որի նպատակն է համաձայնեցնել ԵԱՏՄ-ի երկրների արդյունաբերական քաղաքականությունը և առաջարկություններ նախապատրաստել ԵԱՏՄ-ի արդյունաբերական համալիրի ռազմավարության, զարգացման ուղղությունների և հեռանկարների վերաբերյալ: Հայաստանը ամեն հնարավորություն ունի ԵԱՏՄ-ի երկրների հետ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու համար, ինչին կնպաստեն էներգետիկ ռեսուրսների գների համահարթեցումը, իրանի հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը: Համագործակցության հեռանկարներ կան պաշտպանական, էներգետիկ, մետաղագործական, մեքենաշինական, էլեկտրատեխնիկայի ու գործիքաշինության ոլորտներում և ներդրումների ներգրավման հնարավորություն՝ շինանյութերի, քիմիական, թերև արդյունաբերության, գյուղատնտեսության և սննդարդյունաբերության, ինչպես նաև դեղագործության և գրոսաշրջության ոլորտներում:

Անհրաժեշտ է հստակ կատարել գնաճի մակարդակին վերաբերող ԵԱՏՄ-ի պայմանագրի 63-րդ հոդվածը և ապահովել գնաճի մակարդակների տարրերության փուլային իջեցումը մինչև 3 տոկոսային կետ: ԵԱՏՄ-ի երկրներում էներգետիկ ռեսուրսների առևտրի ընթացքում նպատակահարմար է անցնել ոռուլով հաշվարկի: ԵԱՏՄ-ի անդամ պետությունների առևտրաշրջանառության համար խիստ անհրաժեշտ է վարել համաձայնեցված արժույթային քաղաքականություն, նշելով ԵԱՏՄ-ի պայմանագրի 64-րդ հոդվածում ազգային արժույթի փոխարժեների տատանման հնարավորությունը (ոչ ավել, քան 3 տոկոս):

Անհրաժեշտ է նշել հետևյալ գործոնը. գործնականում ազգային արժույթով փոխաշվարկների չընդլայնման և էներգետիկ ռեսուրսների փոխաշվարկների ժամանակ ոռուսական ոռուլով չկիրառման դեպքում ԵԱՏՄ-ի անդամ երկրների կենտրոնական բանկերը հստակ խրան չեն ունենա ԵԱՏՄ-ը պայմանագրի պահանջների ճիշտ կատարման, ինչպես նաև համապատասխան նորմատիվների և փաստաթղթերի համապատասխանեցման և ընդունման համար: Առանց ազգային արժույթով փոխաշվարկների անցման՝ (հատկապես էներգառեսուրսների մասով) անհնարին է լուծել ԵԱՏՄ-ում էներգառեսուրսների գների ազատականացման և համակարգման կարևոր հարցը: Ապրանքաշրջանառության աճի համար հարկ է քարձրացնել նաև երկրների միջև տնտեսական հարաբերությունների քափանցիկության մակարդակը: Դրա համար պետք է հստակեցնել ԵԱՏՄ-ի պայմանագրի 69-րդ՝ «Թափանցիկություն» հոդվածը, ինչին կնպաստի ԵԱՏՄ-ի երկրների միջև տնտեսական հարաբերությունների թվայնացումը:

ԵԱՏՄ-ի անդամ պետությունների կողմից գիտական հետազոտությունների հիմնադրամի ստեղծումը բույլ կտա ապահովել միջազգային

նշանակության առաջնահերթ հիմնարար և կիրառական հետազոտությունների, մշակումների, ինովացիոն և վեճչուրային ծրագրերի ֆինանսավորումը, թվային տնտեսության խնդիրների լուծումը:

2018 թ. Հայաստանում անցկացվեց ԱՊՀ գիտնականների համաժողով, որին ընդունեց հայտարարագիր: Նշված հայտարարագրի կառուցակարգերը առաջին հերթին պետք է կիրառել ԵԱՏՄ-ում՝ հաշվի առնելով պայմանագրի հիմնական նպատակները: Ելնելով ընդունված հայտարարագրից, համատեղ գիտական հետազոտությունների արդյունավետության էական բարձրացման համար առաջնահերթ խնդիրը գիտական հետազոտությունների միջավետական հիմնադրամի ստեղծումն է:

Ծայրաստիճան անհրաժեշտ է ակտիվացնել բոլոր ԵԱՏՄ երկրների աշխատանքը Վրաստանով դեպի Հայաստան եկող երկարուղու խնդիրը լուծելու համար: Հաշվի առնելով, որ Ղազախստանն ու Բելառուսը բարիդրացիական հարաբերություններ ունեն թե՛ Վրաստանի, թե՛ Ռուսաստանի հետ, նպատակահարմար է ընդգրկել այդ երկրները տվյալ գործընթացում: Վրաստանով Հայաստան երկարուղային շարժման վերսկսումը բույլ կտա զգալիորեն աշխատացնել ԵԱՏՄ ապրանքարժանառությունը ոչ միայն դեպի Վրաստան և Հայաստան, այլև Իրան: ԵԱՏՄ Վրաստանի հետ արտաքին առևտրային ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այս հեռանկարը:

Ինտեգրացման ընթացքում էականորեն աճում է Սիության անդամ պետության տրանսպորտային և տրանզիտային ներուժը: ԵԱՏՄ-ի երկրները շահագրգոված են բոլոր առևտրատնտեսական ուղղություններով երկարուղային և ավտոտրանսպորտային միջանցքների, ինչպես նաև էլեկտրացանցերի զարգացմանը:

Ինտեգրացման դեպքում ԵԱՏՄ-ի տարածքում էներգետիկ ռեսուրսների գների համահարթեցումը և արտահանման տուրքերի վերացումը հստակութեն կնպաստեն ՀՆԱ-ի և արտահանման աճին: Էժան էներգակիրների, նախևառաջ բնական գազի հասանելիությունը օգնում է համեմատարար փոքր տնտեսություն ունեցող ԵԱՏՄ-ի ամդամ պետությանը՝ ավելի սեղմ ժամկետներում իրականացնել իր աճի ներուժը:

ԵԱՏՄ-ի ամդամ պետությունների արտադրանքի արտահանման աճի գլխավոր գործոններն են Սիության տնտեսությունների արդիականացումը, կոռպերացումը և մրցունակության բարձրացումը: Այս երեք գործոնները, հաշվի առնելով դրանց կումուլյատիվ էֆեկտը, ոչ միայն ուղղակիորեն կնպաստեն ՀՆԱ-ի, արտահանման աճին, այլև էականորեն կրարձացնեն բնակչության զբաղվածության մակարդակը: Արտադրանքի ազատ մուտքը ԵԱՏՄ-ի ընդհանուր շուկա պետք է նպաստի հզորությունների առավելացույն բեռնավորմանը:

Բացվում է նաև ԵԱՏՄ-ի ողջ տարածքում պետական գնումների միջույթներում ընկերությունների մասնակցության հնարավորությունը:

Հաշվի առնելով տարածաշրջանի մարտահրավերները, ԵԱՏՄ երկրների անվտանգության հիմնական երաշխիքը Եվրասիական տնտեսական և ռազմաքաղաքական ինտեգրացումն է:

Ակնհայտ է, որ ինտեգրումային գործընթացները և ռազմաքաղաքական համագործակցությունը սերտորեն փոխկապակցված են: Առանց Միության անդամների տնտեսությունների արդիականացման և, հատկապես, կոռպերացման, ռազմաարդյունաբերության համալիրի հաշվին անհնար է ապահովել տնտեսական զարգացումը:

Նշենք, որ ռազմաարդյունաբերական համալիրի տնտեսությունը ոչ միայն ԵԱՏՄ-ի անդամ պետությունների հավաքական անվտանգության հիմքն է, այլև կարևոր դեր է խաղում բնակչության զբաղվածության աճի գործում առաջին հերթին այն երկրներում, որտեղ առկա է գործազրկության բարձր մակարդակ: Ընդհանուր առնամբ ռազմաարդյունաբերական համալիրը ուղղակիորեն նպաստում է երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը:

ԵԱՏՄ-ն իրական հնարավորություններ է ստեղծում երկրի տնտեսական դիրքերի ամրապնդմանը և բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված տնտեսական զարգացման համար: Այդ հնարավորությունները թույլ կտան ապահովել Միության անդամ պետությունների էական տնտեսական և քաղաքական զարգացումը, ինչպես նաև զգալիորեն կավելացնեն դրանց ներուժը կոնկրետ տնտեսական, ինչպես նաև արտաքին քաղաքական խնդիրների լուծման ժամանակ: Թե ինչքանով կհաջողվի իրացնել այդ ներուժը՝ մեծ չափով կախված է ԵԱՏՄ-ի անդամ պետությունների հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականության, կոռուպցիայի հակագուցության, ինչպես նաև ներդրումային գրավչության աճի հետ կապված խնդիրների լուծումից:

Տարածաշրջանային տնտեսության ձևավորումը ենթադրում է ոչ միայն միասնական կառավարման մարմինների ստեղծում և Եվրասիական տնտեսական ինտեգրացմանը մասնակից երկրների գործողությունների համակարգում, այլև ԵԱՏՄ-ի ազգային տնտեսությունների վերակողմնորոշում և դրանց անցում սկզբունքորեն նոր ռելսերի վրա՝ դեպի համընդհանուր ՀՆԱ ցուցանիշներ, համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն, Եվրասիական ֆոնդային շուկայի կապիտալացման աճ, ներտարածաշրջանային ներդրումների ծավալի աճ, Եվրասիական տնտեսության ենթակառուցվածքի միասնական և համաձայնեցված արդիականացում բոլոր մասնակիցների կողմից ընդունված միասնական արդյունաբերական պլանով:

Նման հնարավորությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ճշգրտել տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները, հստակորեն սահմանել և համաձայնեցնել դրա նպատակները, ձևակերպել ԵԱՏՍՈ-ի երկրների տնտեսության զարգացման նոր մոդել և կանխատեսել ակնկալվող արդյունքները: Հենվելով մարդկային և ինովացիոն կապիտալի վրա, այս ամենը կարող է նպաստել այն բեկումնային ներուժի ստեղծմանը, որը մոտ ապագայում թույլ կտա հասնել երկարաժամկետ դիմամիկ տնտեսական աճի արմատական փոփոխության ապահովմանը: Դա անհրաժեշտ է Ռուսաստանին և հատկապես ԵԱՏՍՈ-ի մյուս անդամներին, քանզի, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, առանց տարրողունակ շուկայի համաձայնեցված տնտեսական քաղաքականության և ֆինանսական ու հումքային ներուժի գումարման փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար չեն կարողանում արժանի տեղ գրավել ժամանակակից ինդուստրիալիզացման ոլորտում:

ԱՂԱՍԻ ԹԱՎԱԴՅԱՆ



Տնտեսագիրական գիրությունների
թեկնածու, Եվրասիական
փորձագիրական ակումբի անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵԱՏՄ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ակսած 2016 թ. Հայաստանի արտահանումը՝ հիմնականում ԵԱՏՄ-ի ուղղությամբ ցույց է տալիս վերականգնողական աճ, որը կապված է ԵԱՏՄ-ում ազատ առևտրի հնարավորության հետ: Աճին նպաստեց նաև Հայաստանից մեծ մասամբ Եվրոպա արտահանվող գունավոր մետաղների և հանքանյութի գների աճը: 2016 թ. Հայաստանի արտահանումը աճեց 20.6%-ով, իսկ 2017-ին՝ 22.1%-ով: Երկու տարում արտահանումը աճեց ավելի քան 50%-ով: Մեր կանխատեսմամբ դեպի ԵԱՏՄ, առաջին հերթին՝ Ռուսաստան, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման աճի միտումը կպահպանվի: 2018 թ. Հայաստանի արտահանման աճը կազմեց 9.8%, իսկ 2019՝ 9.3%:

Համապատասխանաբար ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 4-րդ՝ «Միության հիմնական նպատակները» հոդվածում ԵԱՏՄ-ի հիմնարար նպատակներից մեկը տնտեսությունների մրցունակության բարձրացումն է: Երկրի մրցունակության բարձրացման առանցքային ցուցանիշը արտահանման, հատկապես առավել բարձր հավելյալ արժեքը ունեցող պատրաստի արտադրանքի արտահանման աճն է: Հայաստանին անհրաժեշտ է հասնել պատրաստի արտադրանքի ու ծառայությունների արտահանման և ՀՆԱ-ի ոչ պակաս, քան 50% հարաբերակցության, որում, իհարկե, պետք է գերակշռի պատրաստի արտադրանքը, քանի որ ներքին շուկան բավականին սահմանափակ է:

Աղյուսակ 1. Հայաստանի արտահանման աճը


Տարի	2016		2017		2018		2019	
	Մլն. \$ US	աճ %	Մլն. \$ US	աճ %	Մլն. \$ US	աճ %	Մլն. \$ US.	աճ %
Ռուսաստանի Դաշնություն	374	52.9%	531	41.8%	652	22.8%	718	10.2%
ԵՄ երկրներ	479	15.9%	609	27.2%	684	12.3%	583	-14.7%
Միջին Արևելք	313	21.1%	359	14.6%	392	9.2%	394	0.5%
Չինաստան	154	-9.7%	125	-19.0%	113	-9.4%	198	75.2%
Հետխորհրդային տարածքի այլ երկրներ	183	11.9%	185	1.2%	118	-36.3%	132	11.9%
ԱՄՆ և Կանադա	181	7.7%	79	-56.1%	81	2.2%	116	43.2%
Այլ երկրներ	105	65.6%	295	181.4%	358	21.3%	479	33.7%
Ընդամենը	1,789	20.5%	2,184	22.0%	2,398	9.8%	2,621	9.3%

Փոքր տնտեսություն ունեցող երկրներում շուկան էլ փոքր է, այդ պատճառով արտահանումը առանցքային դերակատարում ունի տնտեսական աճի համար: Արտահանման էական աճը առաջին հերթին հնարավոր է ապահովել զարգացման մոտ մակարդակ և միանման խնդիրներ ունեցող հետխորհրդային երկրներ արտահանման հաշվին, ինչը ենթադրում է տնտեսական ինտեգրացում: Հայաստանի արտահանման աճը զգալի ներուժ ունի ԵԱՏՄ-ի անդամ երկրներում, որտեղ կա իր արտադրանքի ավանդական պահանջարկ, և ԵԱՏՄ-ի պայմանագրի համաձայն առկա չեն մաքսատուրքերը և ոչ սակագնային սահմանափակումները:

Ռուսաստանում և այլ երկրներում տեքստիլ-տրիկոտաժային արտադրանքի պահանջարկը զգալիորեն աճել է: Նշված հոդվածների աճը Ռուսաստանում շարունակական է: Էականորեն աճել է նաև հազուսի պարագաների արտահանումը դեպի Ղազախստան:

Աճել է նաև Հայաստանում արտադրված հազուսի պարագաների արտահանումը դեպի ԵՄ: 2019 թ. Հայաստանի տեքստիլային ու տրիկոտաժային արտադրանքը կազմել է ընդհանուր արտահանման 9%-ը: Ուշագրավ է նաև, որ երե 2017 թ. Ռուսաստան արտահանվող ապրանքների կազմում գերիշխում էին ալկոհոլային ու ոչ ալկոհոլային ըմպելիքները, արդեն 2018-ին և հետագայում՝ 2019-ին, արտահանումը դիվերսիֆիկացվեց, և դիվերսիֆիկացումը շարունակական բնույթ է կրում, ինչը նույնակա ցույց է տալիս ԵԱՏՄ-ի շուկայի և ԵԱՏՄ-ի Հայաստանի անդամակցության կարևորությունը: Մենք կանխատեսում ենք արտահանման հետագա դիվերսիֆիկացում առաջին հերթին ԵԱՏՄ-ի ուղղությամբ:

Նկար 1. ԵԱՏՄ-ի երկրներ Հայաստանի արտահանման համեմատությունը 2018-2020 թթ. 1-ին կիսամյակում¹



ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության ընթացքում աճել են նաև ԵԱՏՄ-ի ուղղությամբ արտահանման այլ հողվածները: Այսպես, աճում է արտահանման հողված 71-ը՝ թանձարժեք և կիսաթանձարժեք քարերի, 84–85’ էլեկտրական մեքենասարքավորումների, 03’ ձկնեղենի, 04’ կաթնամթերքի, ձվի արտահանումը: Հայաստանի արտահանման կարևոր հողվածներից է դեղագործական արտադրանքը, որի աճը ակնկալվում է տարեվերջին:

Հայաստանի արտահանման աճին ուղղակիորեն նպաստել են. մաքսատուրքից ազատման պայմանագրի ստորագրումը, բոլոր ընթացակարգերի

¹ ՄԱԿ-ի առևտրաշրջանառության տվյալների բազա

պարզեցումը՝ սկսած ձևակերպումներից և արտահանման արտոնագիր ստանալուց մինչև մաքսային ձևակերպում, ԵԱՏՄ-ի անդամ երկրներում արժեգրկման և ազգային արժույթի փոխարժեքի տատանումների նվազումը, և ներգաղեսուրսների արտոնյալ գները և ԵԱՏՄ-ում փոխադարձ ներդրումների աճը:

2020 թվականը իր ուղղումները մտցրեց ԵԱՏՄ-ի երկրների միջև ապրանքաշրջանառության մեջ: Գլոբալ համավարակի պատճառով Հայաստանի արտահանման աճի տեսակերը, հատկապես դեպի Ռուսաստան, ընկան, սակայն տարեվերջին ակնկալվում է արտահանման աճի վերականգնում: 2019 թ. նոյեմբերի ժամանակաշրջանի համեմատ 2020 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում ավելիության ու ոչ ավելիության ընդունումների արտահանումը Ռուսաստան նվազել է 36 տոկոսով, ընկել է նաև տեքստիլային արտադրանքի արտահանումը: Այս ապրանքների արտահանման աճը կանխատեսվում է տարեվերջին:

Նշենք, որ տեքստիլային արտադրանքի արտահանումը զգալիորեն աճեց ԵԱՏՄ Հայաստանի մտնելուց հետո: 2019 թ. նոյեմբերի ժամանակահատվածի համեմատ 2020 թ. հունվար-ապրիլ ամիսներին բանջարեղենի արտահանումը աճեց 21%-ով՝ հիմնականում լոլիկի հաշվին, մրգեղենի արտահանումը՝ 35%-ով, կաքնամբերքինը՝ 81%-ով: Օպտիկական արտադրանքի արտահանումը աճեց 4 անգամ:

ԵԱՏՄ-ի երկրների միջև ապրանքաշրջանառության աճի համար կարևոր նշանակություն ունի համաձայնեցված դրամավարկային քաղաքականությունը, որը Սիության երկրների տնտեսություններին ավելի մրցունակ դառնալու հնարավորություն կտա: ԵԱՏՄ-ի երկրների դրամավարկային քաղաքականության համաձայնեցման անհրաժեշտությունը առավել վառ դրսւորվեց հատկապես 2014 թ երկրորդ կիսամյակում, երբ Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների, ինչպես նաև նավթի գների էական անկման պատճառով ոչ միայն ԵԱՏՄ-ում, այլև հետխորհրդային տարածքի գրեթե բոլոր երկրներում տեղի ունեցավ ազգային արժույթի փոխարժեքի անկում, որը փոխեց տվյալ տարածաշրջանի շուկայական պայմանները և արտահանման ու ներմուծման հարաբերակցությունը:

Երկարաժամկետ հեռանկարում ԵԱՏՄ-ի հիմնական խնդիրը Սիության երկրների ազգային տնտեսությունների, ներքին շուկայի մրցունակության բարձրացումն է, որը կդառնա Սիության շուկաների տնտեսական աճի կարևոր խթաններից մեկը:

Ռուսաստանը հսկայական շուկա է, որտեղ կարելի է առանց տարիքային սահմանափակումների, գործնականում ազատորեն վաճառել ԵԱՏՄ-ի այլ երկրներում արտադրված ապրանքները: Շուկայի չափը մեծ մրցակցային առավելություն է: Այն ժամանակ, երբ արդի աշխարհում զարգացած

Երկրների շուկաների տարողունակությունը հասել է սահմանագծին, ԵԱՏՄ-ի շուկան դեռևս մնում է չզբաղված և ներդրողների համար գրավիչ տարածք, և այդ մրցակցային առավելությունից պետք է օգտվեն ԵԱՏՄ-ի բոլոր երկրները: ԵԱՏՄ-ի շուկայի ներուժը ակնհայտորեն բավարար չի օգտագործվում:

ԵԱՏՄ-ի շուկայի տարողունակությունը բարձրացնելու համար պետք է ուշադրություն դարձնել Սիության երկրներում արտադրված այրանքների և ծառայությունների որակի ու մրցունակության բարձրացմանը, որը ԵԱՏՄ-ի պայմանագրի գլխավոր պայմաններից մեկն է: ԵԱՏՄ-ի երկրների միջև ազգային արժույթով առևտրի և «ներմուծման տեղակալման» քաղաքականությունը կնպաստի Սիության երկրների պատրաստի արտադրանքի մրցունակության բարձրացմանը և դրա մասնաբաժնի ավելացմանը ինչպես համաշխարհային արտահանման մեջ, այնպես էլ ներքին շուկայում: Հարկ է նաև սևեռել Սիության ուշադրությունը ԵԱՏՄ-ի ներսում միասնական գիտական հետազոտությունների կազմակերպման վրա՝ մասնավորապես, միասնական ներքին շուկայի առավելությունների և հնարավորությունների հիմնավորման համար: Դա, իհարկե, կնպաստի ներքին շուկայում ԵԱՏՄ-ի երկրների ու նրանց արտադրանքի մրցունակության բարձրացմանը և համաշխարհային շուկաների ապրանքների արտահանմանը:

Սիության երկրների միջև ապրանքաշրջանառության հետազա աճի համար նպատակահարմար է, որ դրանց միջև կատարվող տրանզակցիաները դոլարից անցնեն ներքին փոխարկվող արժույթին: Հաշվի առնելով, որ ոռուսական ոուրլին ապահովում է ԵԱՏՄ-ի երկրների ապրանքաշրջանառության 80%-ը, ոռուսական ոուրլով փոխարկվարկները շատ ավելի պակաս ծախսատար կլինեն: Դոլարային հաշվարկները Սիության երկրների միջև ոչ միայն բարձրացնում են տրանզակցային ծախսերը, այլև չեն նպաստում Սիության կայացմանը, ամրապնդմանը և տնտեսական քաղաքականության համաձայնեցմանը, ինչպես նաև Սիության երկրների դոլարիզացման մակարդակի իջեցմանը:

ԵԱՏՄ-ում դեռևս կան խնդիրներ, որ ժամանակի հետ կլուծվեն, սակայն վերջին տարիների տնտեսական արդյունքները ցույց են տալիս, որ ԵԱՏՄ-ն, որպես ինտեգրումային կազմավորում, ունի հսկայական ներուժ ու շուկա, որտեղ կարելի է գործնականում ազատորեն, առանց տարիֆային ռեժիմների իրացնել Սիության երկրներում արտադրված ապրանքները:

Հայաստանն արդյունավետ է օգտագործում ԵԱՏՄ-ի, հատկապես ոռուսական շուկայի հնարավորությունները: 2016 թվականից էականորեն բարելավվեց մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապված իրավիճակը, Հայաստանն արձանագրեց ԵԱՏՄ-ի երկրների միջև ապրանքաշրջանառության ամենաբարձր աճը: 2016-2019 թթ. ընթացքում Հայաստանի արտահանումը դեպի ԵԱՏՄ ավելի քան կրկնապատկվեց: 2017 թ. Հայաստանի

արտահանումը առաջին անգամ հասավ 2 մլրդ դոլարի, իսկ արդեն 2019 թ. կազմեց 2.6 միլիարդ դոլար: 2016–2019 թթ. ընթացքում արտահանումը դեպի Ռուսաստան եռապատկվեց, իսկ դեպի Բելառուս և Ղազախստան գրեթե կրկնապատկվեց:

Ընդհանուր առնամբ Հայաստանը բավականին լավ հակազդեց առաջին հերթին ազգային արժույթի տատանումներով պայմանավորված՝ մեր տարածաշրջանի ճգնաժամային գործընթացներին: Վերջին տարիներին արձանագրվել է արտահանման զգալի աճ, նախնառաջ ԵԱՏՄ-ի ուղղությամբ: Այդուհանդերձ, Հայաստանը խնդիր ունի էականորեն բարելավելու բացասական առևտրային սալդոն, ապահովելու արտահանման և ՀՆԱ-ի հարաբերակցության բարձրացումը, արտահանման հետագա դիվերսիֆիկացումը, խթանելու պատրաստի արտադրանքի արտադրությունը: ԵԱՏՄ-ի շրջանակներում այս խնդիրները լուծելու էական ներուժ կա, որն, իհարկե, կրաքարացնի Հայաստանի տնտեսության մրցունակությունը:

ԱՇԽԵՆԴՐԱՎԱՆ



Քաղաքական գիրությունների
դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
քաղաքագիրության լեռության և
սպորտության ամբիոնի վարիչ,
Եվրասիական փորձագիրական
ակումբի անդամ

ՀԵՏԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՔԱՂԱՔԱՐԹԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաշխարհային ինտեգրումային միավորումների ձևավորման և գործունեության պատմությունը, անկախ դրանց երկարակեցությունից, ցույց է տալիս ոչ միայն սոցիալ-տնտեսական և քաղաքական, այլև մշակութարդարակրթական և զաղափարախոսական նախադրյալների առկայության կարևորությունը։ Բացի ինտեգրացումային գործընթացներում ներգրավված ժողովուրդների միասնական տնտեսական տարածք ստեղծելու ձգությունից, գործնականում բոլոր միավորումներում ներկա է դարավոր մշակութաքաղաքակրթական ավանդույթների վրա հենված զաղափարախոսական քաղադրյալ, որն իր հերթին հենվում է միավորվող ժողովուրդների հանրային գիտակցության և քարոյահոգեքանական հատկանիշների վրա։ Նման բազիսային զաղափարական համակարգերի թվին կարելի է դասել թե՝ «միասնական Եվրոպայի», «ամերիկանիզմ» կամ տարբեր պատմական դարաշրջաններում Հարավ-արևելյան Ասիայում արարախոս կամ թյուրքախոս ժողովուրդների մոտ առաջացած միավորող «նորմատիվային համակարգերը», թե՝ համաշխարհային զաղափարախոսությունները, որ հավակնում են դառնալ «ժողովուրդների մտքի» տիրակալ։

Փորձը ցույց տվեց, որ հենց զաղափարական գործնն է հանդես գալիս որպես գրեթե բոլոր ինտեգրումային միավորներին «ցեմենտող ուժ»։ Առանց այդ ուժի նոր միություններ ստեղծելու բոլոր ճիգերն ապարդյուն են, քանի որ ցանկացած միավորում վերածվում է տնտեսական և քաղաքական

կյանքին մասնակցության մակարդակին վերաբերող և նկրտումների աստիճանի հասնող փոխադարձ նախատինքների հարթակի: Իրականում, գաղափարախոսական հենքից զուրկ հանրային կյանքի այս ոլորտները ինքնըստինքյան չեն կարող ապահովել ինտեգրումային միավորումների ներդաշնակ, հավասարակշիռ և անխափան զարգացումը: Թեպես այդ ոլորտների բնույթը ինքնին նպատակառուղղված է զարգացմանը, այստեղ ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս կողմերի շահերի հակասություն կամ նոյնիսկ բախում, ինչը բնականոն է: Գաղափարական համակարգը հենվում է ավելի բարձր մակարդակի սկզբունքների, պարզ կենսական շահերից հեռու համոզմունքների և արժեքային կողմնորոշչների վրա: Հենց այդ հանգանանքն է, որ թույլ է տալիս բազմաթիվ կայացած միավորումներին գտնել իրենց հաջողակ գործունեության համար անհրաժեշտ փոխզգիցումներ և առաջացող խնդիրների փոխադարձ ընդունելի լուծումներ:

Տարբեր միությունների դիրքորոշումը բացառապես քաղաքական և տնտեսական շահերի կողմ հղի է դրանց բախման բացարձակացմանը և դրամատիզացումով:

Ընդհանուր գաղափարական համակարգը կոչված է կոնցեպտուալ կերպով հիմնավորելու միավորված ժողովուրդների հանրային գիտակցության տարբեր մակարդակների գոյություն ունեցող ընդհանրությունը թե՛ հասարակական հոգեբանության, թե՛ ուսցիունալ-տեսական ոլորտում: Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած գաղափարախոսություն, այդպիսի գաղափարական համակարգը բաժանում է աշխարհին ըստ «յուրայինների» և «օտարների»: Միավորմանը ձգտող պետությունների միությունը ոչ մի դեպքում չի կարող անտեսել այս սկզբունքը: Այդուհանդերձ, փորձը ցույց տվեց մոտեցումների կոնցեպտուալացման թե «որոշական», թե «բացասական» տարրերակները: Առաջին տեսակի հիմնավորումները շեշտում են եզակի լինելու հանգանանքը և ուղղված են դեպի տվյալ միության «խորքերը՝ պետությունների միավորման դրական գործոնները բացահայտելուն»: Բնականարար, այդ հիմնավորումը չի կարող գոյատեսել առանց այլ կոնցեպտուալ-տեսական ձևի մեջ պարուրված ընդհանուր պատմության համապատասխան տեսլականի, որոշ բարոյական իդեալների, նորմների և ավանդույթների անսասանության ճանաչման, ինչպես նաև առանց համոզվածության իրենց արժեհամակարգի «ճշմարտացիության» մեջ: Ընդհանուր առմանը այդ ընդհանուր գաղափարական համակարգի հիմնական գործառույթը միավորված ժողովուրդների միասնականության և միասնության սատարումն է:

Գոյություն ունի գաղափարական հիմնավորումների մեկ այլ «բացասական» տեսակ: Որպես կանոն այն շեշտադրում է տվյալ միավորման հակառակությունը մնացյալ աշխարհին: Այս մոտեցման շարժառիթները

կարող են լինել հավատը իրենց արժեքային համակարգի բացառիկության հանդեպ և այն այլ ազգերի վզին փաթաթելը, իրենց աշխարհաքաղաքական ազդեցության ընդլայնումը և այլն: Շատ հաճախ նման ձգուումն առաջանում է միավորման ներսում իրարամերժ միտումների սրման պայմաններում: Այդ դեպքում տվյալ միության քաղաքական վերնախավը սկսում է «հակառակորդների» ու «մրցակիցների» փնտրությունը «վտանգ» ներկայացնող պետությունների շարքում, որոնք և միանգամից դասվում են «քշնամիների» թվին:

Նման իրավիճակ էր տիրում ԽՍՀՄ-ի տասնեսական ճգնաժամի պայմաններում, երբ բոլոր դժբախտությունները բարդվում էին «համաշխարհային խմբերիալիզմի» վրա: Ներկայումս նման բան է տեղի ունենում թե՛ ԵՄ-ում, թե՛ ՆԱՏՕ-ում: Այդ մոտեցմանը մրում են նման միավորմանների անդամների ներքին տարածայնությունները ընդհանուր բյուջեն կազմելու, Եվրամիության երկրների հավասարակշիռ զարգացման ապահովման, ԵՄ-ի երկրներ զանգվածային միզրացիայի հետ կապված միջոցառումների և, ընդհանրապես, միության միզրացիոն քաղաքականության, նոր տեսակի կորոնավիրուսի համավարակի բացասական հետևանքների հաղթահարման, ՆԱՏՕ-ի բյուջե փոխանցումների չափի և նույնիսկ երկրորդ համաշխարհային պատերազմի համար ռեպարացիաների վճարման պահանջների, ինչպես նաև երկրների տարածքային և այլ հարցերում: «Սիասնական Եվրոպայի» և «Լուսավորյալ Արևմուտքի» միավորող օպերատորները անկարող են լիովին լուծել առաջացած խնդիրները և, միգուցե ժամանակավորապես, սակայն որոշ չափով երկրորդ պլան են մղվել: Ի հայտ է զայխ արևմտյան աշխարհից դուրս «քշնամիներ» փնտրելու խիստ կարիքը: Գաղտնիք չե, որ այսօր որպես «սպառնալիք» առաջին հերթին «նշանակված են» Ռուսաստանը և Չինաստանը:

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ-ի անդամ պետությունների կողմից ցանկացած միության կամ միավորման որպես «յուրայինը» ընկալելու պարտադիր պայմանը դրա հարատևությունն է: Միավորման մասնակից պետությունների «երկու աթոռին նստելու», «օտար» քաղաքական սուբյեկտներին սիրաշահելու փորձերը, դրանց արժեհամակարգը ընդօրինակելու հույսով, կարող են ոչ միայն սեպ խրել միավորման մասնակիցների միջև, այլև ուղղակիորեն ձևավորել որոշակի «կոմպլեքսներ» այն ժողովուրդների մոտ, որոնց հասարակական գիտակցությունը չի կարողանում ընկալել իրենց համար «օտար» վարկեցողության նորմերը և ընկնում է տարբեր հակասությունների մեջ: Սա հատկապես վերաբերում է այն ժողովուրդներին, որոնք կապում են իրենց ինքնությունը հազարամյա կամ դարավոր ավանդույթների հետ, որոնք նոր ինքնության «ձևավորման» կարիք չունեն: Սակայն վերջինիս ձևավորումը, իրոք, հնարավոր է դառնում սկզբունքորեն նոր արժեհամակարգում, առավել ևս, եթե այն համընկնում է այդ ինքնությունը կրող ժողովրդի

ժամանակակից, աճող պահանջների ու կարիքների բավարարման հետ՝ լինի դա «օտարի» հաշվին սոցիալ-տնտեսական զարգացումը կամ թե իրեն չպատկանող տարածքների յուրացումը և այլն: Այդպիսի երկրները, որպես կանոն, գործնականում չեն կարող դառնալ ցանկացած ինտեգրումային միավորման ընդհանուր գաղափարական պլատֆորմի ձևավորման գործընթացի հուսալի մասնակից:

Ներկա վիճակով Եվրասիական տնտեսական միությունը հենվում է դեռևս միայն քաղաքական և տնտեսական շահերի ընդհանրության վրա: Տնտեսության ոլորտը խսկապես լայն հնարավորություններ է բացում Սիության մասնակից երկրների դիմաց: Դա վերաբերում է թե՛ խորհրդային ժամանակներից մնացած տնտեսական կապերին, ապրանքների սպառման շուկայի մատչելիությանը, հավասար մրցակցային պայմաններին, թե՛ նաև արտաքին գործոններին՝ առաջին հերթին ԵԱՏՄ-ի երկրների հանքային ռեսուրսներին ուղղված արտաքին շուկայի սահմանափակմանը, բողնելով միջազգային շուկա վերամշակված արտադրանքի լոկ աննշան քանակություն: Հարկ է նաև հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում համաճարակով պայմանավորված ռեցեսիան հաղթահարելու ձգտման հետ կապված պրոտեկցիոնիզմի միտումն աշխարհում միայն կուժեղանա: Այս հանգամանքները դրդում են ԵԱՏՄ-ի երկրներին տնտեսապես էլ ավելի նոտենալ:

Ինչ վերաբերում է քաղաքական փոխգործակցության հարցին, պետք է ելնել այն փաստից, որ ԵԱՏՄ-ն դարձավ Հավաքական անվտանգության պայմանագրի կողմ երկրների թեպետու շատ կարևոր, բայց լրացում: ԵԱՏՄ-ի երկրների քաղաքական փոխգործակցությունը հիմնականում կենտրոնացած է Ռուսաստանի շուրջ և կրում է ավելի զինառազմավարական բնույթ, հենվելով յուրաքանչյուր երկրի՝ Ռուսաստանի հետ ընդհանուր երկկողմ շահերի վրա: Երբեմն նկատելի է որոշ անհամաձայնեցվածություն ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամ երկրների միջև տարբեր քաղաքական կամ զինառազմավարական հարցերով: Այդ տարածայնությունները, իհարկե, հաղթահարվում են, բողնելով, սակայն, իրենց սպին Սիության ներքին միջավետական հարաբերություններում:

ԵԱՏՄ-ում գործնականում բոլոր տարածայնությունները հնարավոր է հաղթահարել միայն կազմակերպության բոլոր անդամների համար ընդունելի քաղաքական գաղափարախոսության առկայության դեպքում: Սիության կայացման սկզբնական փուլում շատ քաղաքագետների, մասնավորապես ոուս մասնագետների կարծիքով որպես ինտեգրումային միությունը «ցեմենտող» գաղափար կարելի է օգտվել 20-րդ դարասկզբի ոուս հեղինակների աշխատություններից հայտնի «Եվրասիականություն» հասկացությունից: Դարեւերջին այդ եզրը օգտագործեց Ղազախստանի այն ժամանակվա նախագահ Ն. Նազարբաևը Եվրասիական Սիության ստեղծման գաղափարն

առաջարկելիս: Իհարկե, նախաձեռնության հեղինակն առաջին հերթին նկատի ուներ տնտեսական բաղադրիչը, որ դեռևս պահպանվել էր ԽՍՀՄ-ին ժառանգության տեսքով: Պետք է տարրերակել «Եվրասիականության» տեսությունը նոր ինտեգրումային միավորման կառուցման կոնցեպտից:

Եվրասիականությունն, ըստ Էտոթյան, 1920-ական թվականների սկզբում ծագած և մինչև 30-ականները տևած պահպանողական հասարակական-քաղաքական շարժում էր, որն արտացոլում էր ոռու ազգային գիտակցության ստեղծագործ արձագանքը 1917 թ. «ռուսական աղետին»: Քաղաքական արհավիրքների եւուում որոշ երիտասարդ ոռու գիտնականներ (Ն. Ս. Տրուբեցկոյ, Պ. Պ. Սուվչինսկի, Պ. Ն. Սավիցկի, Գ. Վ. Ֆլորովսկի) նշանակեցին ոռուսական մշակույթում տեղի ունեցող կործանարար գործընթացներ: Նրանց պատկերացմանը կոմունիզմը սեկուլյար արևմտաեվրոպական մշակույթի ծնունդ էր, իսկ ոռուսական հողի վրա՝ արևմտամետության ծայրահեղ դրսերում: Նրանք կոչ էին անում ճանաչել Ռուսաստանի Եվրոպականացման գործընթացի վտանգը և պահպանել նրա զարգացման ուղղությունը: Առաջացման պահից ի վեր Եվրասիականության գաղափարը պաշտպանում էր ազգերի հնքնության պահպանումը և մերժում արևմտյան հասարակություններում տարածված՝ թեկուզ համամարդկային նշանակություն ունեցող «տրաֆարետները» ու «վարվեցողության օրինակները»:

Մյուս կողմից՝ Եվրասիականության կարևոր գաղափարախոսական մեկ այլ դրույթը ճանաչում է Եվրասիայի անծայրածիր տարածքները քնակեցնող ժողովուրդների գենետիկական կապը և մշակութահոգեբանական ընդհանրությունը: Այդ ընդհանրության պատմական ակունքները կարելի է գտնել հզորագույն ցամաքային կայսրություններում, որոնք ժամանակ առ ժամանակ միավորում էին Եվրասիայի ժողովուրդներին, յուրօրինակ վեկտոր հաղորդելով նրանց զարգացմանը:

Եթե համաշխարհային զարգացման ներկա փուլում «Եվրասիականության» առաջին ասպեկտը հասուն արդիականություն է ձեռք բերել, երկրորդը ինչ-որ առումով վտանգավոր է ոչ միայն ԵԱՏՄ-ի շատ անդամների համար, որոնք այն անընդունելի են համարում իրենց ինքնության տեսակետից, այլ նաև վտանգավոր է հենց Ռուսաստանի համար, քանի որ շոշափում է իր համար այլքան զգայուն ազգի գենեգիսի հարցերը:

Այդ պատճառով ԵԱՏՄ-ն այսօր կանգնած է այնպիսի գաղափարական պլատֆորմի ստեղծման անհրաժեշտության առաջ, որը պետք է մի կողմից ժամանակակից «հնչեղություն» ունենա, իսկ մյուս կողմից՝ կարողանա հիմնավորել դարերով ձևավորվող նորմերի և ավանդույթների ընդհանրությունը, որը հենվում է ոչ թե ազգերի և ժողովուրդների գենետիկական կապի, այլ երկարատև պատմական ժամանակաշրջանի արդյունքում ձևավորված համակեցության սկզբունքի հիման վրա: Մեր ժողովուրդների ներկայա-

ցուցիչները հայտնի են լավ փոխընթանակամք, որը պայմանավորված է նույն պատմական ուղին անցնելով, Եվրասիական հասարակությունների առջև ծառացած միանման հիմնահարցերով ու խնդիրներով:

Սեր կարծիքով, այդ գաղափարական պլատֆորմը պետք է հենվի պահպանողական գաղափարախոսության վրա, որը մի կողմից ուղղված է հասարակության դեմոկրատացման (ժամանակակից ընթանամք) գործընթացի արագացման վրա, իսկ մյուս կողմից, լայն աշխարհայացքային իմաստով, պետք է ապահովի հասարակական կյանքի հոգևոր-բարոյական բաղադրիչի ակտիվացումը, հարգալից վերաբերմունքը ազգային ավանդույթների և նիստուկացի նկատմամբ, որը մոտեցնում է այն ազգային ինքնազիտակցությանը և նպաստում է ազգերի ինքնանույնականացմանը:

Ավանդականությունը, հավատը և կողմնորոշումը դեպի բարոյական նորմերը բարենպաստ հող են ստեղծում Եվրասիական հասարակությունների քաղաքական մտայնությունում «ազգային դեմքով» պահպանողական դրսւրումների համար: Ժամանակակից պայմաններում պահպանողական արժեքների կողմնակիցների ամենանշանվոր հատկանիշների թվին կարելի է դասել այն համոզվածությունը, որ արդարությունը մարդու իրավունքներից կարևոր է, հավատարմությունը ավանդույթներին, համոզվածությունը, որ պետության և ազգի շահերը վեր են առանձին քաղաքացու շահերից, կողմնորոշումը դեպի ուժեւ պետություն, որպես կարգ ու կանոնի և բարեկեցության ապահովման գործոն, քաղաքացիների որոշ իրավունքների սահմանափակման հնարավորությունը ընդհանուր նպատակներին հասնելու համար:

ԵԱՏՄ-ի ժողովուրդների քաղաքական հոգեկերտվածքում գերիշխում է պետական ինքնիշխանության որոշակի պատկեր: Ժողովուրդը ոչ այնքան համարարում է իշխանությանը ինչ-որ գործառույթներ, ինչքան հանձնում է նրան իր ճակատագիրը: Պետական խնամակալությունը դիտվում է որպես «քարիք» և իշխանության պարտականություն հասարակության առջև: Որպես պետական իշխանության իդեալ մենտալիտետը առաջին հերթին ընդունում է միանձնյա (պատասխանատու) և արդար (բարոյական) իշխանությունը: Իշխանության այս «պատկերը» կողմնորոշված է դեպի չափավոր ավտորիտար իդեալը, որը մշտապես համակցվում է հավաքական ժողովրդավարության հետ:

Թվարկված ասպեկտները, ինչպես և անցյալում, պահպանում են իրենց արդիականությունը, քանի որ խորհրդային մարդկանց սերունդը մեծ մասամբ կարողացել է փոխանցել իր աշխարհայացքի սկզբունքները նոր սերնդին, ինչը թույլ է տալիս հուսալ, որ մեր ժողովրդի հանրային գիտակցության բարոյահոգեբանական ասպեկտի ընդհանրությունը պահպանված է, ինչն, իր հերթին, հրաշալի հիմք կծառայի նոր Եվրասիական պահպանողական գաղափարախոսության մշակման համար:

Ուստահան արդեն համարձակորեն գնում է այդ ճանապարհով, հակադրելով ժողովրդավարության ու սոցիալական արդարության իր տեսլականը նեղիբերալ արժեհամակարգին: Այդ մասին են վկայում ՌԴ քնակչության տպավորիչ աջակցությունը նոր սահմանադրական փոփոխություններին: Գրեթե 30-ամյա «տարրնթացությունից» ու երերումից» հետո Ռուսաստանի հասարակությունը գտավ ինքնիշխան և արժանապատիվ զարգացման իր ուղին: Հերթը ԵԱՏՄ-ի մյուս անդամներին է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Պրոֆեսոր, Երևանի պետական
համալսարանի թյուրքագիրության
ամբիոնի վարիչ, Եվրասիական
փորձագիրական ակումբի անդամ



ԵԱՏՄ-ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ՄՇԱԿՈՒԹ-ԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹ-ՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹ-ՅԱՆ ՀԵՌԱԿԱՐՆԵՐԻ ԵՎ «ԵՎՐՈՊԱԿԵՆՏՐՈՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ» ՀԵՐՔՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԱՏՄ-ի երկրների գիտության ու մշակույթի զործիչների առջև ծառացած՝ ընդհանուր պատմության, մշակույթի մեջ միավորող բաղադրիչի և զարգացման համատեղ ուղիների կառուցման հարցերը, թեև վերջին ժամանակներս ներհոսում են ակադեմիական շրջանակների առավել կամ պակաս պողիտիվ ու պրագմատիկ երկխոսության հուն, սակայն, որպես կանոն, չեն ստանում համապատասխան հասարակական-քաղաքական հիշեղություն, և, բնականաբար, առայժմ ամենկին էլ ոչ պատշաճ չափով է օգտագործվում հետխորհրդային տարածքի ահոելի «մշակութաբանական զինանոցը»: Բայց չէ՞ որ ԵԱՏՄ-ի երկրների կամ Հյուսիսային Եվրասիայի ժողովուրդները իրականում ամրարել են ոչ միայն տնտեսական բազմադարյա համագործակցության անկրկնելի փորձ, այլև փոխադարձաբար հարստացնող մշակութային փոխանակման ու նույնիսկ մշակույթների ներքափանցման ու «սիմբիոզի», կրոնական և ազգային հանդուժողականության ավանդույթներ, որոնց համարանությունը դժվար է գտնել միևնույն դարաշրջանների արևմտաեվրոպական պատմության մեջ:

Համակողմանի աջակցության են արժանի, ցավոք, ոչ բավականաչափ ինտենսիվ, սակայն էապես արդյունավետ միջոցառումները, որոնք անց են կացվում ոռուսատանյան խոշորագույն համալսարանների հենքի վրա՝

առաջատար արևելագետների, պատմաբանների, մշակութաբանների, մշակույթի գործիչների և ավանդական դավանանքների հոգևորականության ներկայացուցիչների ներգրավմամբ։ Այս միջոցառումների շարքում են «Իսլամը բազմամշակութային աշխարհում» թեմայով ամենամյա համաժողովը, «Ուսասատանը և բյուրջ-մուսուլմանական աշխարհը» թեմայով գիտաժողովները, որոնք կազմակերպվում են Կազանի (Ստրազբուգան) դաշնային համալսարանում։ Հայ արևելագետները, ովքեր վերոհիշյալ միջազգային գիտաժողովների մշտական մասնակիցներն են, հետևողականորեն ընդգծում են ոուսասատանյան ու խորհրդային արևելագիտության եզակի ժառանգության պահպանման, Մ. Վ. Լոմնոսովի և Ն. Ի. Լորաչևսկու ժամանակներից եկող այն ավանդույթների պահպանման կարևորությունը, որոնք ենթադրում են հայրենասիրական ու մարդասիրական սկզբունքների ներդաշնակ զուգակցում հենց գիտության ու կրթության հեռանկարների ուրվագծման գործընթացում՝ բացառելով ստորաքարշությունը արևմտյան կեղծ հեղինակությունների առջև և հայրենական դպրոցին «Եվրոպակենտրոն հրամայականի» քարացած կաղապարների պարտադրումը (նման պարտադրման փորձերը պատմականորեն միշտ էլ ակտիվացել են երկրաշափական պրոգրեսիայով, երբ կեղծ գիտական շրջանակները զգացել են, որ խառնաշփորտությունն ու գժտությունն հերքական անգամ բույն են դմում Ուսասատանում): Ուսասատանյան ու խորհրդային արևելագիտության դասականներին միշտ էլ բնորոշ են եղել ոչ միայն լայն երուժիցիան, արևելյան և եվրոպական լեզուների, աղյուրների, նաև Արևելքի ժողովուրդների կենցաղի նրբերանգների հիմնարար իմացությունը (ինչը նրանց, իրավամբ, դասում է եվրոպական արևելագիտության դասականների շարքին), այլև հարգանքն ու սերը դեպի Արևելքի ժողովուրդները, գոռոզության, մենթորական որևէ հարկադրանքի և պախարակման, սնապարծության, կրոնական երկպառակության և ազգային, ռասսայական, հարանիվանական գերազանցության ցանկացած դրսորման բացառումը։ Նույնիսկ մարտնչող արեկզմ՝ կոմոնիստական զաղափարախոսության այս պարտադիր «ծրագրային ուղեկցի» թելադրանքի պայմաններում խորհրդային ականավոր արևելագետները գտնում էին համապատասխան ալգորիթմներ՝ ազգային-կրոնական ժառանգության հուշարձանների օբյեկտիվ-համակողմանի ուսումնասիրության համար, իսկ արևելագիտական գիտակարգերի գործնական դասավանդման ընթացքում բնականոն ու պրազմատիկ կերպով շեշտադրվում էր Արևելքի ժողովուրդների ազգային-կրոնական առանձնահատկությունները հասկանալու և դրանց նկատմամբ հարգալից վերաբերունք ձևավորելու՝ արևելյան լեզուների իմացությունից ոչ պակաս կարևորությունը (ուսանողներին դասախոսությունների ու սեմինարների ժամանակ ականավոր պրոֆեսորները միշտ բացատրում էին, որ կրոնական հանդուրժողականությունը, «այլ

մշակույթի» ֆենոմենը գնահատելու ունակությունը ապագա մասնագետների համար նույնպիսի պարտադիր ատրիբուտ ու «պարզ» է, ինչպես պոլիֆոնիկ մտածողությունը՝ կոմպոզիտորի կամ դիրիժորի): Ամենափել էլ պատահական չէ, որ թյուրքագետ-քանասերների մուկովյան դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Վ. Ա. Գորդիևսկու անունը այսօր էլ նույնպիսի ակնածանքով է արտաքրվում թե՛ Ռուսաստանում ու Հայաստանում, և թե՛ Կենտրոնական Ասիայի երկրներում: Հատկանշական է, որ խորհրդային արևելագետները՝ ներկայացնուիչները մի գիտության, որի անվանման մեջ իսկ կարծես թե ի սկզբանե գերակայել է «Եվրոպայից դեպի Արևելք ուղղված հայացքը», եվրոպակենտրոն կոնցեպցիաների հերքման գործուն մեթոդական հիմքերի հետևողական և անխոնջ վիճուրտուք էին ծավալել:

2020 թվականին Ղազախստանում, Ռուսաստանում, Հայաստանում ու բոլոր բարեկամ երկրներում անց են կացվում հորելյանական հանդիսություններ՝ նվիրված դազախական նոր գրականության հիմնադիր Արայ Կունանբակի 175-ամյակին: Արայը՝ հումանիստ-մտածողն ու լուսավորիչը, ճիշտ էր կանխատեսել ու պրագմատիկորեն գնահատել էր Ռուսաստանի քաղաքակրթական դերն ու ռուսական մշակույթի բարեկեր ազդեցությունը եվրասիական տարածքի ժողովուրդների համար: Արայը, ով պատանեկան տարիներին ավարտել էր մեկրեք, մեղքես և ռուսական դպրոց, յուրացրել էր մուտքմանական Արևելքի և Ռուսաստանի ժողովուրդների արժեքները, դարձել էր Դուրանի և Աստվածաշնչի փայլուն գիտակ, Պուշկինի, Լերմոնտովի և այլ ռուս բանաստեղծների ստեղծագործությունների, Չայկովսկու երաժշտության նուրբ գնահատող, իր «Սև խոսքեր» փիլիսոփայական պոեմում հետևողականորեն ընդգծում էր ռուսական կրթության կարևորությունը դազախ ժողովորդի «մրցունակության» համար: XIX դարի և XX դարի սկզբի Ռուսաստանի կայսրությունում միավորված՝ տարբեր ազգեր ներկայացնող լուսավորիչների գեղարվեստական ստեղծագործություններում, հրապարակախոսության մեջ ու նամականիում անսասան ու հզոր ազգային հենքի վրա վերահմատավորվել ու արտացոլվել են հումանիզմի և ինտերնացիոնալիզմի իդեալները, Արևելքի և Արևմուտքի մշակութային-քաղաքակրթական արժեքները: Այսօր արդիական են, քանի երրուէ Արայի, հայ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Խահակյանի և գրականության մյուս դասականների պատգամները ժողովուրդների բարեկամության անսասանության, Ռուսաստանի հետ հարաբերությունների քաղաքական վայրիվերումներից որևէ կախվածություն բացառելու մասին: Չէ՞ որ մեր ժամանակակցի և ժողովուրդների առաջ կանգնած է զարգացման վեկտորի ծանր ընտրությունը, հարկավոր է հետևել առաջընթացի ուղուն՝ շրջանցելով և՝ ազգային պարփակվածությունը, և՝ գլոբալ մշակութային տարրալուծումը՝ անցնելով, ասես «Սկիլլայի և Քարիբդայի» արամերում:

Մարտնչող ուլտրալիբերալիզմի առավել ազրեսիվ դրսնորումների վտանգին դեմ հանդիման կանգնած չափավոր պահպանողականության կողմնակիցները՝ պրոֆեսորադասախոսական, լրագրողական, վելութական շրջանակների ներկայացուցիչները, ԵԱՏՄ-ի երկրներում չեն կարող շրջանցել այն հիմնահարցերը, որոնք կապված են գաղափարական ուղղուցույցների բյուրեղացման, մշակումների միջազգային ասպարեզում հումանիտար մտքի մրցունակությունն ապահովող աղապտացիոն կառուցակարգերի ընտրության փաստրությին: Այս առումով էլ կցանկանայինք փաստել, որ ամբողջ աշխարհում Ռուսաստանն անկեղծորեն սիրող մշակույթի գործիչները սրտամոտ են ընկալում Սուրբ Իշխան Ալեքսանդր Նևսկու, Սինինի և Պոժարսկու բազմադարյան հրամայականի «իմպերենտացման» ուղիների որոնումը: Պատմության ճակատագրական պահերին անհրաժեշտ է համաժողովրդական համախմբում, և Ռուսաստանի ժողովուրդը միշտ էլ գտել է ճիշտ լուծումն ու համախմբվել, իսկ այնժամ գտնվել են և՛ դաշնակիցներ, և՛ ուժեր, և՛ միջոցներ... Ամեն դարաշրջանում գտնվելու է անկրկնելի «զինանոց»՝ հոգևոր և նյութականացված մի «քուր», որը դիմագրավելու է ժողովուրդների համար անխախտ արժեքների վրա ցանկացած հարձակման. Հիշարժան են Վ. Մ. Շուկանի նշանավոր ֆիլմում հնչող երգի տողերը.

«Чтобы Русь-кормилицу уберечь,
Для того и надобен этот меч.

.....
За Россию-матушку – млад и стар.
За Россию – каждый встал.
За Россию-матушку – все умны.
За Россию-матушку – все смелы.
За Россию-матушку – все сильны.
Для России-матушки – все сыны».

Նախահեղափոխական Ռուսաստանի նտավորականությունը Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունից ավելի վաս չգիտեր Ֆրիդրիխ Լիստի ուսմունքը. ինչպես կեցությունն է որոշում զիտակցությունը, այդպես էլ զիտակցությունն է որոշում կեցությունը, հոգևոր-ինտելեկտուալ արժեքները ոչ պակաս կարևոր են ազգի մրցունակցության համար, քան նյութական արտադրության միջոցները: Անծայրածիր Ռուսաստանի կայսրության անօրինակ տնտեսական վերելքը XIX դարի երկրորդ կեսին – XX դարի սկզբին կանխորոշվել և ուղեկցվել էր ոռուսական մշակույթի և գիտության անհավանական թոփշքով՝ համայն աշխարհը գարմացնող գլուխագործոցների ստեղծմամբ ու հայտնագործություններով: Խորհրդային գերտերության ժողովուրդներն էլ անթաքույց հպարտանում էին Պրոլետարիա, Շուտակովիչի

ու Խաչատրյանի երաժշտությամբ, Շոլոխովի և Այրմատովի արձակով, Էյգենշտեյնի ֆիլմերով, ինչպես և միջուկային ֆիզիկայի կամ տիեզերագնացության ասպարեզների նվաճումներով: Չնայած «քաղաքական շահարկումներին»՝ ռուսական մեծ մշակույթին առհավետ և անքակտելիորեն են կապված Ս. Ռախմանինովի, Ի. Բունինի, Մ. Բուլգակովի, Բ. Պաստերնակի, Ա. Սոլժենիցինի, Ա. Տարկովսկու անունները: Նրանց կյանքի ու ստեղծագործության՝ ռուսական մշակույթի օվկիանոսից դրւու ընկալման հնարավորությունն իսկ, Ա. Վիսմատովայի բանաստեղծական բանաձևամբ, վիրավորական է «ողբացյալ ոգու» համար...

Համաշխարհային գերտերությամբ՝ Խորհրդային Սիության փլուզումն իր հետ բերելու էր ոչ միայն ամենարածան սոցիալական ցեցումներ ու միջնավոր մարդկանց կենսամակարդակի աճելում, այլև «ցունամի» մշակույթում ու հոգևոր կյանքում: Արտերկրից էլ «Եվրոպական բրենդի» մակնշումով հաճախ «մատուցվում էին» և այսօր էլ պարտադրվում են արժեքներ, որոնք ամենին ել համամարդկային չեն, խիստ պայմանականորեն կարող են համարվել «հումանիստական», բայց, որպես կանոն, հակոտնյա են մեր ժողովուրդների ավանդական արժեքներին (իիրավի դրանք երբեմն ավելի կործանարար են ավանդական իմքերի համար, քան նույնիսկ գաղափարախոսականացված-աբեհատական պետության ամենամարտնչող օրենքները): Վերակառուցման տարիներին և ԽՍՀՄ-ի փլուզման դարաշրջանում խորհրդային մարդիկ, որոնք երազում էին լուսավոր ապագայի մասին և, իհարկե, արժանի էին այդ ապագային, անգամ չէին ենթադրում, թե ինչ կորուստներ են սպասում իրենց, ճղճան ձայները խլացնում էին հեռատեսներին ու իմաստուններին, ովքեր հասկանում էին ազնիվ երկխոսության, և՝ անցյալի վերահմատավորման, և՝ ներկայի ու ապագայի ռեալ ընկալման անհրաժեշտությունը: Հիշում ենք հայ ժողովրդի մեծ բարեկամ՝ ռուսական-խորհրդային պոեզիայի Վարպետ Մ. Դուդինի իմաստուն խրատը այն բեկումնային փուլում.

Доверься собственным глазам,
Осмысли все свои потери,
Потом уже кричи: “Сезам,
Откройся!” – у закрытой двери.

Ժամանակակից աշխարհում չե՞ն կարող լինել փակ քենաներ: Այսօր Ռուսաստանում և ԵԱՏՄ-ի մյուս երկրներում բաց ու անկողմնակալ բանավեճ է ծավալվել ամենացավոտ (երբեմնի փակ և այդ իսկ պատճառով հակառուսական աճպարարությունների գործիք դարձած) հիմնահարցերի շորջ, քննարկվում են և՝ Հյուսիսային Եվրասիայի միջնադարյան պատմության, և՝ խորհրդային ոչ վաղ անցյալի վերահմատավորման հարցերը: Արագ տնտեսական աճի ու սոցիալական զարգացման հարացույցների ստեղծմանը

զուգընթաց ԵԱՏՄ-ի երկրների քաղաքական ու ինտելեկտուալ ընտրանուն վիճակված է տքնաջան աշխատանք՝ նպատակառուղղված ընդհանուր մշակութային ժառանգության քարոզմանը, մեր ժողովուրդներին միավորող կողմնորոշիչների և մրցունակության բաղադրիչների բյուրեղացմանը:

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Պակունական գիրությունների թեկնածու,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
և դիվանագիրության ամբիոնի
ղոցենպ, Եվրասիական
փորձագիրական ակումբի անդամ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ-ԻՆ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Այսօր ցանկացած պետության համար կարևոր է սեփական անվտանգության ապահովումը: Խորհրդային Միության վլուգումից հետո անվտանգության հարցը սրբեց նախկին խորհրդային հանրապետությունների համար: 1992-ի մայիսի 15-ին ստորագրվեց Հավաքական անվտանգության պայմանագիրը, և պետք է ասել, որ դրանում վերարտադրվում են բոլոր այն նույն սկզբունքները, որ առկա են Եվրասիական այլ կառույցների ստեղծման պայմանագրերում: Կազմակերպությունն իր գործունեության մեջ առաջնորդվում է տարբեր միջավետական և միջազգային համաձայնագրերով, որոնք կազմում են ոչ միայն երազ գործունեության իրավական հիմքը, այլև տարածաշրջանային (Եվրասիական) հավաքական անվտանգության քաղաքական և իրավական հիմքերը: Պայմանագրի հիմնական դրույթը 4-րդ հոդվածն է, որի համաձայն «եթե անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվում է ազրեսիայի որևէ պետության կամ պետությունների խսրի կողմից, ապա դա կդիտարկվի որպես ազրեսիա սույն Պայմանագրի կողմերի բոլոր մասնակից պետությունների դեմ»:

Մասնակից պետություններից որևէ մեկի նկատմամբ ազրեսիայի գործողություն կատարելու դեպքում մասնակից բոլոր մյուս պետությունները նրան կտրամադրեն անհրաժեշտ օգնություն, ներառյալ ուղղական օգնությունը, ինչպես նաև կազակցեն իրենց տրամադրության տակ եղած միջոցներով՝ հավաքական պաշտպանության իրավունքի իրացման գործում՝

ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն»: Բայց Հայաստանի պարագայում մեր երկիրը ինքն այդպիսի խնդրանք չի ներկայացնում՝ գտնելով, որ կարող է ինքնուրույն հաղթահարել խնդիրը:

ՀԱՊԿ-ն, ի տարբերություն ՆԱՏՕ-ի, կազմակերպությանն անդամակցություն չի պարտադրում մասնակիցների հնարավորինս լայն շրջանակին և չի «խաղում մկաններով»՝ ցուցադրելով ռազմական հզորություն: Դաշնակիցների, գործընկերների և հակառակորդների հետ հարցերի լայն շրջանակով պայմանավորվածությունները հիմնական ձևաչափն են կազմակերպության կողմից Եվրասիական տարածքում հավաքական անվտանգության ռեժիմն ապահովելու և դրա սահմաններից դուրս Պայմանագրի կողմերի ռազմավարական շահերի ապահովման համար:

Եերք բերված պայմանավորվածությունների և պարտավորությունների խստագույն պահպանումը օգնում է ՀԱՊԿ-ին դառնալ տարածաշրջանում ավելի ու ավելի հեղինակավոր կազմակերպություն: Ավելին, կարելի է պնդել, որ ՀԱՊԿ-ը դառնում է Եվրասիայում ընդհանուր առմամբ անվտանգության ապահովման հիմնական կառույցը, ԱՊՀ-ի, ԵԱՏՍՈ-ի, ՇՀԿ-ի և այլնի հետ վիխսգործակցության միասնական համակարգի հիմքը՝ դրանց գործունեության հստակ բաժանված կամ ինտեգրված մանդատների հիման վրա:

ՀԱՊԿ-ի ներկայացուցիչները բազմիցս հանդես են եկել առաջարկություններով Եվրասիական անվտանգության համակարգման խորհրդի ստեղծման վերաբերյալ, որը համակարգող դեր կսահա Եվրասիայի տարածքում ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդեցության կազմակերպման գործում միջազգային ահարեւկչության և ծայրահեղականության, քմրանյութերի ապօրինի շրջանառության, ապօրինի միգրացիայի և ստվերային բիզնեսի դեմ պայքարում:

Սեր կարծիքով՝ ԵԱՏՍՈ-ն և ՀԱՊԿ-ը կարող են համարվել անդրտարածաշրջանային միավորում, քանի որ դրանք ոչ միայն միավորում են Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներ, այլև հանդիսանում են Հյուսիսային Եվրասիայի տարածքում ամենաազդեցիկ և լայնամասշտար կառույցները:

Նշենք, որ Հայաստանը, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի հետ միասին ՀԱՊԿ-ի հիմնադիր երկիր է:

Ինչպես ցանկացած պետության, ներառյալ նաև Հայաստանի Հանրապետության ազգային շահերի կարևորագույն տարրը ռազմաքաղաքական քաղաքիչն է, որը սովորաբար ավելի արդյունավետ ապահովում և սպասարկում է, եթե պետությունը հավաքական անվտանգության որևէ համակարգի կամ դաշինքի անդամ է: Տեսականորեն, պետությունների կողմից կողեկտիվ անվտանգության համակարգերը մշակվել են՝ ապահովելու ավելի արդյունավետ և ավելի քիչ ծախսատար լուծումներ պետական անվտանգության, հատկապես ռազմական անվտանգության խնդիրներին,

և պատասխանել սպառնալիքներին՝ արտակարգ կամ ուազմական իրավիճակներում զրիերի կրծատման միջոցով։ Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ի շրջանակներում Հայաստանի ուազմական անվտանգության խնդիրները լուծելուն, ապա պաշտոնական Երևանը հնարավորություն ունի համատեղ պաշտպանել ցամաքային և օդային սահմանները՝ ՀԱՊԿ-ի անդամ պետության (մեր դեպքում՝ հատկապես Ռուսաստանի) հետ անհատական համագործակցության միջոցով։ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության բաղադրիչներից մեկը հավաքական խաղաղապահ ուժն է, որը բաղկացած է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ 6 երկրների գինված ուժերի ստորաբաժանումներից և կազմում է շուրջ 3500 գինծառայող։ Հավաքական խաղաղարար ուժերից բացի, ՀԱՊԿ-ն ընդգրկում է նաև Հավաքական արագ արձագանքնան ուժեր, որոնք ՀԱՊԿ-ից դուրս օգտագործելու իրավասություն չունեն։ Ներկայումս ընթանում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Հավաքական օդուժի ստեղծման գործընթացը, որը կոչված է դյուրացնելու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ուժերի տեղափոխումը, գենրի փոխանցումը և այլն։

Մյուս կողմից, ՀԱՊԿ-ն իր անդամներին հնարավորություն է տալիս ակտիվորեն համագործակցել ուազմական ոլորտում, ձեռք բերել, վերանորոգել և արդիականացնել զենք ու ուազմական տեխնիկա (հիմնականում Ռուսաստանում, Երբեմն՝ Բելառուսում), իրականացնել տարբեր գորավարժություններ՝ տարբեր նպատակներով և մասնակցությամբ։ Ստանալ ուազմական կրթություն ուազմական համալսարաններում դաշնակցային պայմաններով, իրականացնել կողեւկտիվ հականգնաժամային միջոցառումներ, համագործակցել հակաօդային պաշտպանության ոլորտում, լուծել առկա խնդիրները արագ արձագանքնան ուժերի օգնությամբ՝ ուազմական սրացումների ժամանակ, տեղեկատվություն փոխանակել ուազմական հնարավորությունների վերաբերյալ և այլն։

Հայաստանի համար հայ-ռուսական ուազմական համագործակցությունն առավել նշանակալից է ՀԱՊԿ շափման հարցում, որի շրջանակներում կողմները երկու տասնամյակ շարունակ ապահովում են Կովկասի և Ռուսաստանի ուազմական անվտանգությունը Հայաստանին և Ռուսաստանին։ Դրա վկայությունն է Ռուսաստանի Դաշնության գինված ուժերի հայ-ռուսական համակցված ուազմական խմբի 102-րդ ուազմարազան, որի մասին համաձայնագիրը 2017 թվականի հունիսին վավերացրել է Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման, իսկ հոկտեմբերին՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը։

Կազմակերպության շրջանակներում համագործակցության հաջորդ կարևոր բաղադրիչը Հայաստանի Հանրապետության անդամակցությունն

Էր ոռուս-քելառուսական հակաօդային պաշտպանության համատեղ համակարգին, ինչպես նաև Հայաստանի կողմից գենքի և ռազմական տեխնիկայի ձեռքբերման հնարավորությունը ոռուսական շուկայական գներով, ինչպես նաև համատեղ գորավարժությունները տարածաշրջանային տարրեր սցենարներում:

Պաշտոնական Երևանը, ի տարրերություն ՀԱՊԿ-ի այլ անդամ երկրների, ավելի հավանական է, որ ներգրավված լինի ռազմական բախման մեջ՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Ըստ պաշտոնական դիրքորոշման՝ ՀԱՊԿ-ը չի միջամտում արցախյան հակամարտության կարգավորմանը, այլ միայն վերահսկում է իրադարձությունների զարգացումը, քանի որ կան նաև այլ միջազգային կազմակերպություններ, որոնք գրանդում են այդ խնդրով, մասնավորապես՝ ԵԱՀԿ Սինակի խումբը: Չնայած այս հանգամանքին՝ արցախյան հակամարտության կարգավորումը պարբերաբար հիշատակվում է ՀԱՊԿ-ի շրջանակներում: Օրինակ, ՀԱՊԿ-ի անդամ երկրների 2014 թ. մայիսի 15-ի հոչակագիրը: Նույն բվականի դեկտեմբերի 23-ի հայտարարության մեջ ասվում է, որ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների դեկավարները, վերահստատելով դարարադյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, շեշտում են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հիմնական սկզբունքները՝ միջազգային իրավունքին և ՍԱՎ-ի կանոնադրությանը համապատասխան՝ ուժի սպառնալիքի չկիրառում, տարածքային ամբողջականություն և ժողովուրդների իմքնորոշում:

Պետք է ասել, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը ոչ միայն և ոչ այնքան ռազմաքաղաքական կազմակերպություն է: 21-րդ դարում ի հայտ եկան նոր սպառնալիքներ, և կազմակերպությունը պետք է պատշաճ կերպով արձագանքի այդ սպառնալիքներին: ՀԱՊԿ զիսավոր քարտուղար Նիկոլայ Բորյուժան 2015-ի դեկտեմբերին տված իր հարցազրույցներից մեկում նշել է, որ կազմակերպությունը չի սահմանափակվում միայն ռազմաքաղաքական խնդիրների լուծմամբ: Մասնավորապես, Բորյուժայի խոսքով, կազմակերպության անդամները համագործակցում համագործակցում են ապօրինի միզրացիայի և ահարեկչության դեմ պայքարի, արտակարգ իրավիճակների դեպքում մարդասիրական օգնության և տեղեկատվական անվտանգության դեմ պայքարում, ահարեկչական կազմակերպությունների կողմից քաղաքացիների հավաքագրման դեպքերի դեմ և այլն:

Ժամանակին, իր հարցազրույցներից մեկում, խոսելով ՀԱՊԿ-ի մասին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն առաջարկել է որպես առաջնահերթություն սահմանել «ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության ռազմավարությունը մինչև 2025 թվականն ավարտել»:

Այսօր Երևանը շարունակում է ամրապնդել իր դիրքերը ՀԱՊԿ-ում և ակտիվորեն մասնակցել ՀԱՊԿ-ի խաղաղապահ առաքելություններին: ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադի զինծառայողները 2016 թ. մայիսի 17–19-ը Բելառուսում մասնակցեցին շտարի երկրորդ բանակցություններին՝ ՀԱՊԿ-ի անդամ երկրների խաղաղապահ ստորաբաժանումների «Անսասան եղբայրություն–2016» համատեղ զորավարժությունների նախապատրաստման և անցկացման վերաբերյալ: Հայաստանի զինված ուժերի պատվիրակությունը մասնակցել է 2016 թ. մայիսի 20-ին Տաջիկստանում անցկացվող ՀԱՊԿ-ի ռազմական տնտեսական հանձնաժողովի 14-րդ ժողովին: 2016 թ. մայիսի 24–26-ը Հայաստանում տեղի ունեցան ՀԱՊԿ-ի արագ արձագանքման հավաքական ուժերի հասուլ նշանակության զորքերի զորավարժությունները: ՀՀ կառավարության որոշմամբ, ոռուսական կողմի խնդրանքով, հայկական մարդասիրական զորախումբը գտնվում է Սիրիայի Արաբական Հանրապետությունում, որտեղ օգնում է ականազերծել գրոհայիններից ազատված տարածքները: Մի կողմից՝ Հայաստանը, որպես ՀԱՊԿ-ում Ռուսաստանի դաշնակից, կատարում է իր դաշնակցային պարտավորությունները, իսկ մյուս կողմից ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության ինքնարիոններով մարդասիրական օգնություն է ուղարկում Սիրիայի հայ համայնքին և ողջ սիրիացի ժողովրդին:

2017 թ. Երևանում անցկացվեց «Փոխգործակցություն–2017» համատեղ ուսումնամարզական հավաք՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հավաքական արագ արձագանքման ուժերի զորակազմի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի, Սիրիավորված զորքերի մի մասի հետ միասին: ՀԱՊԿ-ի անդամ բոլոր պետություններից (Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Կրդզստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և Տաջիկստանի Հանրապետություն) գործնական զործողություններում ներգրավված անձնակազմի ընդհանուր թիվը կազմում էր ավելի քան 2500 մարդ, ներգրավվել էին մոտ 500 միավոր գենք և ռազմական տեխնիկա՝ ներառյալ 25 ինքնարիո: Պետք է ասել, որ զորավարժությունը ռազմական քախման լուծման փուլի վերջին միջոցառումն էր, որն իրականացվեց «Մարտական եղբայրություն–2017» գործնական-ռազմավարական զորավարժության շրջանակներում: 2019-ին Տաջիկստանում ՀԱՊԿ-ի խաղաղապահ ուժերը անցկացրին «Անխախտ եղբայրություն–2019» զորավարժությունը:

Հայաստանը, որպես ՀԱՊԿ-ի հիմնադիր երկիր, ակտիվորեն մասնակցում է կազմակերպության խորհրդի աշխատանքներին, իսկ 2017-ից՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար նշանակվեց ՀՀ զինված ուժերի գլխավոր շտարի նախկին դեկանը, Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար,

գեներալ-գնդապետ Յուրի Խաչատրովը: Այնուամենայնիվ, 2018 թվականի օգոստոսին հայկական կողմը նախաձեռնեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում Հայաստանի ներկայացուցի լիազորությունների շուտափույթ դադարեցումը, ինչը, անշուշտ, ազդեցի ինչպես հայ-ռուսական հարաբերությունների, այնպես էլ կազմակերպության միջազգային հետինակության վրա:

Եթե զուգահեռներ անցկացնենք ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի միջև, ապա պետք է ասել, որ Հայաստանի կառավարության որոշումը ԵԱՏՄ-ին երկրի անդամակցության վերաբերյալ, միայն տնտեսական օգուտներ չի հետապնդում: Հայաստանի համար, որպես մի երկիր, որը պատերազմում է Ադրբեյչանի հետ, կարևոր է անվտանգությունը: Ասոցացման համաձայնագրի ստորագրումը ոչ միայն տնտեսապես շահութաբեր չէ, այլև կտանգավոր է՝ հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը իր անվտանգությունը կապում է ՀԱՊԿ-ի հետ, և որ ռուսական 102-րդ ռազմակայանը տեղակայված է Հայաստանում: Լիբերալների այն փաստարկները, որ կարելի է ՀԱՊԿ-ի մաս կազմել, բայց տնտեսությունը կապել Եվրոպայի հետ, չեն դիմանում որևէ քննադատության: Աշխարհում ոչ մի տեղ նման բան չկա, որ ռազմարադարական առումով պետությունը լինի մեկ դաշինքում, իսկ տնտեսական առումով՝ մեկ այլ: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը Հայաստանին բույլ է տալիս զենք գնել ներքին գներով: Այս փաստը նույնպես շատ կարևոր է՝ հաշվի առնելով այն տարածաշրջանը, որտեղ գտնվում է Հայաստանը, և թե ովքեր են նրա հարևանները:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ ամբողջ աշխարհում, անկասկած, կազմակերպության վատահությունը մեծանում է, և ՀԱՊԿ-ը ունի ռազմաքաղաքական կազմակերպությունից ունիվերսալ միջազգային կազմակերպության վերածվելու բոլոր հնարավորությունները: Կարող ենք նաև վստահորեն ասել, որ ՀԱՊԿ-ի զարգացումը, անկասկած, մեծ նշանակություն ունի մեծ Եվրասիայի ընդհանուր տարածքի անվտանգության ապահովման համար:



ЕАСУның айнамал әмбаппирежүйенінегінің тұрғындары
Флаг ЕАЭС и Государственные флаги
государств-членов ЕАЭС



Евразиялық жаһандық экономикалық комитетінің бинасы
Здание Евразийской экономической комиссии



Եվրասիական տնտեսական համաժողովի խորհրդի նիստ, Երևան
Заседание Совета Евразийской экономической комиссии, Ереван



Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստ, Երևան
Заседание Совета Евразийской экономической комиссии, Ереван



ԵԱՏՄ նախարարները ամփոփում են Հայաստանի
ԵԱՏՄ անդամակցությունը
Министры ЕЭК подводят итоги членства Армении в ЕАЭС



«Եվրասիական տնտեսական միություն, Հայաստան –
համագործակցություն» բիզնես ֆորում
Бизнес-форум «Евразийский экономический союз,
Армения – сотрудничество»



ԵԱՏՄ նախարարների հանդիպումը Հայաստանի բիզնես համայնքի հետ
Встреча министров ЕЭК с бизнес-сообществом Армении

Արամ Սաֆարյան	
Ներածություն	3
Միքայել Մելքոնյան	
«Հայաստանը ԵԱՏՄ-ում. Ինտեգրման տնտեսական արդյունավետությունը» հրատարակության ընթերցողներին	6
Վլադիմիր Լեպեխին	
Հայ-ռուսական հարաբերությունները որպես հետխորհրդային տարածքի եվրասիական ինտեգրման ամրապնդման և զարգացման կարևորագույն պայման	9
Թաթու Մանասերյան	
ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության արդյունքները (2015-2020 թթ.) և եվրասիական ինտեգրման գործընթացի հեռանկարները	13
Աշոտ Թավաղյան	
ԵԱՏՄ-ի շրջանակներում Հայաստանի տնտեսության զարգացման սցենարները և ներուժը	19
Աղասի Թավաղյան	
Հայաստանի տնտեսության մրցունակությունը ԵԱՏՄ-ի շրջանակներում	26
Աշոտ Ենգոյան	
Հետխորհրդային տարածքի ինտեգրման գաղափարախոսական և մշակութարարաժական ասպեկտների մասին	32
Ալեքսանդր Սաֆարյան	
ԵԱՏՄ-ի երկրների ժողովուրդների բազմադարյան մշակութային համագործակցության ավանդույթների ուսումնասիրության հեռանկարների և «Եվրոպակենտրոն հրամայականի» հերթման մասին	39
Գրիգոր Բալասանյան	
Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Ըստհանուր տարածքի անվտանգության ապահովման հարցի շուրջ	45